19-25 ՀՈՒՆԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 022(5890)

Azg Վազ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բելգիան կհատուցի գաղութային բռնության զոհերին

1885-1960 -ին այժմյան Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության տարածքում Բելգիայի գաղութային դաժան համակարգն էր տիրում: Ո՛չ զոհերի հստակ թիվ կա, ո՛չ էլ վայրագությունների մասին հիշողության ձեւավորված մշակույթ: Հայտնի է, որ գաղութարարներն երեխաներին բռնի խլում էին իրենց մայրերից, բերում կաթոլիկ միսիոներների Կասայ կայան: 1960- ականների սկզբին արդեն Բելգիայի գաղութներում 1000 -ավոր երեխաներ առեւանգվել էին, տեղավորվել գիշերօթիկներում, քանի որ նրանց հայրերը սպիտակամորթ եվրոպացի էին: Գաղութարարների կարծիքով այդ երեխաները չպիտի գոյություն ունենային: Ֆիլիպե թագավորը 2022-ին Կոնգոյում ցավակցել, բայց ներում չի խնդրել: Հունիսի 17-ին ՁԼՄ-ները հաղորդեցին՝ բելգիական դատարանի վճռով մայրերից խլված 5 կնոջ 50 000 եվրո հատուցում է տրամադրվելու: Մարդկության դեմ ոճիրները պատիժ գտնում են, եթե կա պահանջատեր:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Դեռ ի՞նչ խարդախություն ասես չի կատարվի մեր երկրում...

Ընտրություններում հաղթած լինելու վերաբերյալ Ն. Փաշինյանի կեսգիշերային բլեֆի բացահայտման գործում «Բարգավաճ Հայաստանի» ստացած ձայների գողության փաստերը, ինչպես տեսնում ենք, կարեւոր, թերեւս ճակատագրական դեր ունեցան բլեֆի հեղինակի ու նրան աջակցողների, ընդհուպ՝ նրանց ենթակա պետական ծառայողների համար: Եթե Գագիկ Ծառուկյանը շարունակի հետեւողական լինել բողոքարկման ներկա ընթացքը շարունակելու աշխատանքներում եւ ջանքեր թափի տեղական համապատասխան ինստանցիաներից հետո հարցը միջազգային դատարան ներկայացնելու ուղղությամբ, ապա, կարծում եմ, մենք կունենանք վավերական պատկերը վերջին խայտառակ ընտրությունների: Դա անհրաժեշտ է ի ցույց մեր ժողովրդի՝ Մայր հայրենիքում թե Սփյուռքում, միաժամանակ անհրաժեշտ է՝ ի պաշտպանություն մեր գործարար դասի, որը վերջին 7-8 տարիներին հայտնվել է ոչ բարենպաստ պայմաններում, ներդրումային միջավայրի բացակայության, հարկահանության, պետական ռեկետի հետեւանքով:

Այս պայմաններում են նաեւ Գ. Ծառուկյան ու Սամվել Կարապետյան գործարարները, որոնք, հետաքրքրական զուգադիպությամբ: Հայ եկեղեցու բարերարներ են, առաջինը՝ Աբովյան քաղաքում Սբ. Հովհաննես Մկրտիչ, երկրորդը՝ Մայր աթոռ Սբ. Էջմիածնում դիվանատան, փառավոր դահլիճի եւ գողտրիկ մատուռի կառուցմամբ: Մեկ այլ զուգադիպությամբ, երկուսն էլ գտնվում են պետական ռեկետի ենթակա: Մեկի խոշոր ներդրումը հանդիսացող ՀԷՑ-ը արդեն իսկ խլվել ու «պուպուլիկացվել» է, իսկ մյուսի ցեմենտի գործարանը կխլվի շուտով:

Գաղտնիք չէ, որ Ն. Փաշինյանը հատուկ ատելություն ունի Հայ եկեղեցու բարերար հանդիսացողների նկատմամբ: Եթե ողջ լիներ բարեգործ Հրայր Հովնանյանը, որի միջոցներով կառուցվել է Սուրբ Աննա եկեղեցին Երեւանի կենտրոնում, նույնպես արժանացած կլիներ նրա «հատուկ» վերաբերմունքին: Բարեբախտաբար Փաշինյանը չգիտի մեր ժողովրդի պատմությունը. այլապես վաղուց պատմության դասագրքերից կհեռացվեին Դետրոյթի Սբ. Հովհաննես ոսկեգմբեթ եկեղեցին կառուցած Ալեք Մանուկյանի, Մարտիկյան ընտանիքի եւ մյուս բարերարների անունները, Փարիզի Ժան Գուժոն պողոտայի վրա գտնվող մեր տաճարի բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի, Կահիրեի ու Լոնդոնի առաջնորդանիստ մեր եկեղեցիների բարերար Գալուստ Գյուլբենկյանի, Սիսիանից Գորիս մեկնող ճանապարհի վրա կառուցված Սբ Տրդատ եկեղեցու բարերար Կառլ Սողոյանի եւ, վերջապես, աշխարհի բազմաթիվ քաղաքներում կառուցված հարյուրավոր մեր մյուս եկեղեցիների բյուրավոր բարերարների եւ, նույնիսկ, մեր հին թագավորների, ասենք, Կարսի Սրբոց Առաքելոց դեռեւս կանգուն տաճարը կառուցած Աբբաս թագավորի, Անիի, Վան-Վասպուրականի, Կիլիկիայի, Երուսաղեմի, Հալեպի, Աթենքի, Լիբանանի, Մոսկվայի եւ այլ վայրերի եկեղեցիները կառուցած արքաների, իշխանների անունները, մանավանդ որ նրանք եւ առհասարակ բարեգործները հարուստ են եղել, իսկ Ն. Փաշինյանը, ինչպես գիտենք, չի սիրում հարուստներին, այլ սիրում է նրանց հարստությունը:

Բնավ չեմ չափազանցում: Փաշինյանը անձամբ է տվել ասվածի ճշմարիտ լինելու փաստը: Նա մեր երեխաների դասագրքերից հանել է տվել Մեսրոպ Մաշտոցի անունն ու նկարը, թերեւս նրա համար, որ մեր սրբերից ամենասուրբը կառուցել է տվել Ամարասի դպրանոցն ու վանքը Արցախում...

***

Նախորդ օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ի պատասխան «Բարգավաճ Հայաստանի» բողոքարկմանը հայտարարեց, թե ձայների հաշվարկման ընթացքում թեեւ եղել են անճշտություններ, սակայն դրանք չեն կարող էական ազդեցություն ունենալ ձայների ընդհանուր թվի վրա: Այլ խոսքով, թերեւս ակամա, հանձնաժողովը հաստատել է ընտրությունների լեգիտիմությունը, որը, մյուս կողմից, այն բանից հետո, երբ պարզվեց, որ ստացած ձայների քանակով ՔՊ-ն չի կարող սահմանադրական առավելություն ունենալ եւ 2/3-ի առավելությամբ շարունակել իր բռնատիրական վարքագիծը խորհրդարանում, Ն. Փաշինյանն ինքն էլ է սկսել կասկածի տակ դնել լեգիտիմությունը ընտրությունների, ինչպես ընդդիմադիր կուսակցությունները:

Նորից խառնաշփոթ իրավիճակ՝ նիկոլական նոր խարդավանքների հեռանկարով: Հետեւաբար, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդը, իմ կարծիքով, ընդդիմադիր մյուս առաջնորդների հետ պարտի միջազգային դատարանին դիմել եւ ստանալ իրավական գնահատական խարդախված ընտրությունների մասին:

«Զգուշություն լավ բան ի», պիտի ասեին իմաստուն վանեցիները:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Կարոտ մնացինք հանրային համերաշխության

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԸՀ-ն հունիսի 14-ին, երեք ընտրական տեղամասերում, վերահաշվարկ կատարելու վերաբերյալ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության դիմումներն ուսումնասիրելուց հետո, հայտարարեց, որ արձանագրված խախտումները չեն ունեցել այնպիսի ազդեցություն, որը կարող էր փոխել ընտրության արդյունքները, չնայած այդ երեք ընտրատեղամասերի արդյունքները ճանաչեց անվավեր: ԲՀԿ-ին, այդպիսով, ընդամենը մի քանի տասնյակ քվե պակասեց՝ խորհրդարան անցնելու, ու դա էականորեն փոխեց նոր խորհրդարանի ուրվագիծը. եթե մինչ այդ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը 61 մանդատ ուներ ընտրություններում ստացած քվեով եւ չէր կարող շատ կարեւոր օրենքների ընդունման եւ առանցքային պաշտոնյաների նշանակման համար Սահմանադրությամբ հարկավոր 3/5 մանդատներն ունենալ, ապա այժմ դա լրացրեց եւ վերցնելու է 64 մանդատ՝ մի կերպ լրացնելով կայուն մեծամասնության պահանջը:

Մի անգամ էլ հիշեցնենք ԿԸՀ հրապարակած վերջնական արդյունքները՝ Աժ անցած կուսակցությունների մասով.

«Քաղաքացիական պայմանագիր»- 726 819 քվե կամ 49.7456 տոկոս

«Ուժեղ Հայաստան»-340 006 քվե կամ 23.2710 տոկոս

«Հայաստան» դաշինք- 144 983 քվե կամ 9.9231 տոկոս

Աժ մանդատները բաշխվում են հետեւյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր»՝ 64 մանդատ, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք՝ 29 մանդատ, «Հայաստան» դաշինք՝12 մանդատ:

Հետեւանքը հանրության համար հոգեբանական է, քանի որ կես միլիոնից ավելի մարդ, անկախ շարժառիթից, մերժել է իշխանությանը, ու այդ մարդկանց քվեի հետ հաշվի չնստել չի կարելի: Իշխանության համար էլ հարմարավետ չէ, քանի որ նա չունի ինքնավստահություն ներշնչող սահմանադրական մեծամասնությունը, որը նրան հնարավորություն էր տալու Սահմանադրություն փոխել, անվերապահ դիրքից խաղաղության փաստաթուղթ ստորագրել, քանի որ երկրում կես միլիոն մարդ համաձայն չէ այդ քաղաքականության հետ:



Իսկ առարկայական գետնի վրա ընտրությունների նման պատկերը իշխանության եւ ընդդիմության նոր դիմակայության առիթ է:

Ընտրություններին հաջորդող խորհրդարանական քառօրյայից սպասվում էր տեսակետների եւ մոտեցումների հստակեցում հետընտրական տրամաբանության մեջ: Սակայն ընդդիմադիր խմբակցություններն այդպես էլ խորհրդարան չներկայացան, իսկ իշխանության ներկայացուցիչները վիրտուալ եւ միակողմանի պատասխանում էին ընդդիմության խոսույթին եւ քայլերին՝ հիմնականում ագրեսիվ տոնով եւ սպառնալով:

Անձամբ ես այս գումարման Աժ-կառավարություն վերջին հարցուպատասխանից սպասում էի ուրվագիծ, թե ինչպե՞ս է աշխատելու իշխող ուժը նոր պայմաններում, նվազագույն մանդատներով, ի՞նչ տակտիկա է որդեգրելու, ինչպե՞ս է կառավարություն կազմելու, ո՞ր քայլերն են առաջնահերթ լինելու: Բայց տեսա իշխանականների նյարդայնություն, ընդդիմությանն ուղղված սպառնալիքներ՝ այն ենթատեքստով, որ հանկարծ ու ընդդիմադիրները չհամարձակվեն մանդատ վերցնել եւ խորհրդարան գալ: Միգուցե այդ տարբերակի համար իշխանությունն արդեն ծրագիր եւ օրենսդրության ճեղքերն օգտագործելով՝ ավելի հարմար ընդդիմություն խորհրդարան ներս բերելու մտադրություն ունի՞: Կամ գուցե ավելի հեռահար պլաններ կան՝ նոր, արտահերթ ընտրությունների գնալու, որի միտքն անգամ ծակ բյուջեով եւ բազմաթիվ առաջնահերթ լուծման սպասող խնդիրների առկայությամբ պիտի որ անհնար թվար:

⇨6

«Առանց արտաքին ճնշման ՀՀ-ն կաղերը չի խզի որեւէ մեկի, այդ թվում՝ ՌԴ-ի հետ»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Հարավային Կովկասի «վերջին, շատ փխրուն ժողովրդավարություն ունեցող» հետընտրական Հայաստանի մասին է ծավալուն վերլուծություն հրատարակել 2018-ին Բեռլինում հիմնադրված քաղաքական, տնտեսական եւ հասարակական թեմաներ արծարծող անկախ լրագրությունը կարեւորող «The Pioneer »-ը՝ հունիսի 15-ին հրատարակելով «Հայաստանը եւ խաղաղության գինը» վերնագրված վերլուծությունը՝ Արարատի մշտահմա գեղեցկությանը հենված Երեւանից լուսանկար կցելով: Հեղինակը Վանաձորում ծնված, Մոսկվայում ապրած, այժմ Դրեզդենում բնակվող սոցիոլոգ, պատմաբան, գրող **Արեն Վանյանն** է: Վերլուծությունը ցույց է տալիս, թե «ինչպես է ընտրությունների արդյունքը երկիրը դրել լուրջ փորձության դեմ հանդիման՝ Ադրբեջանի ճնշման, Մոսկվայի անվստահության, Արեւմուտքի սպասումների միջեւ», ընդգծում է The Pioneer-ը՝ հրապարակման նախաբանում:

«Հայաստանի հետխորհրդային պատմության ընթացքում ոչ մի ընտրություն հասարակությանն այնքան չի բաժանել, որքան հունիսի 7-ին կայացածը: Աշխարհաքաղաքական լարվածությանն էր գումարվել քաղաքական ղեկավարության սուր հռետորաբանությունը:

⇨3

Վե՛րջ պատերազմի՞ն. Ի՞նչ կտաի Իրանը, ի՞նչ կստանա ԱՄՆ-ը

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Ուրբաթ օրը՝ հունիսի 19-ին Շվեյցարիայում կստորագրվի Իրան-ԱՄՆ համաձայնագիրը: Այդ մասին բոլոր լրատվամիջոցներն են հայտարարում եւ ավետում, որ հարցը վերջնականապես համաձայնեցված է:

Հունիսի 14-ին ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփն** իր սոցիալական հարթակում գրեց.

«Իրանի Իսլամական Հանրապետության հետ համաձայնագիրի նախագիծը վերջնականապես ստորագրվել է: Շնորհավորում եմ բոլորին: Սույնով ես լիովին թույլատրում եմ Հորմուզի նեղուցի վերաբացումը՝ առանց անցման տուրքերի, եւ միաժամանակ հրահանգում եմ անհապաղ վերացնել Միացյալ Նահանգների կողմից ծովային շրջափակումը: Խաղաղության նավե՛ր, գործարկեք ձեր շարժիչները: Թող նավքը հոսի»:

Այդ հայտարարությունը հաստատեց նաեւ Իրանի ազգային անվտանգության գերագույն խորհուրդը՝ տեղեկացնելով, որ ավարտվել է Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ պատերազմի ավարտին վերաբերող բանակցությունների (Իսլամաբադի բանակցություններ) շրջանակում մշակված փոխըմբռնման հուշագրի տեքստի համաձայնեցումը:

Այսպիսով, ամիսներ շարունակվող ինտենսիվ բանակցություններից հետո, որոնք սկզբում ընթանում էին Պակիստանի, իսկ ավելի ուշ՝ Քաթարի միջնորդությամբ, կողմերը կարողացան հասնել նախնական համաձայնության: Այն դեռեւս վերջնական կարգավորում չէ, սակայն հիմք է ստեղծում համապարփակ համաձայնագրի շուրջ հետագա բանակցությունների համար:

Ձեռքբերված պայմանավորվածությունը հաշվի է առնում ինչպես 2025 թվականի հունիսյան 12-օրյա, այնպես էլ 2026 թվականի փետրվար-մարտ ամիսների 40-օրյա պատերազմի քաղաքական եւ ռազմավարական արդյունքները: Այլ կերպ ասած՝ դիվանագիտական գործընթացն ակտիվացավ այն պահին, երբ ռազմական ճանապարհով այլեւս հնարավոր չեղավ հասնել նախապես հայտարարված նպատակներին:

ԱՄՆ-ի ռազմական ներխուժմանը եւ Իրանի քաղաքական ու ռազմական ղեկավարության դեմ իրականացված գործողություններին նախորդած շրջանում Վաշինգտոնը ձեւակերպել էր մի շարք հստակ նպատակներ՝ Իրանում վարչակարգի փոփոխություն, հրթիռային ծրագրի սահմանափակում, միջուկային ծրագրի ապամոնտաժում եւ տարածաշրջանային դաշնակիցներին («պրոքսի ուժերին») ցուցաբերվող աջակցության դադարեցում:

Սակայն ռազմական գործողությունների մեկնարկից ընդամենը մի քանի շաբաթ անց ակնհայտ դարձավ, որ վարչակարգի փոփոխության ծրագիրը չի իրականանում: Վաշինգտոնի հաշվարկներով՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի համատեղ գործողությունները պետք է հանգեցնեին ներքին անկայունության, զանգվածային բողոքների եւ իշխանության տապալման: Ըստ ամենայնի, նման սցենար էր նախատեսում նաեւ Մոսադի այն ժամանակվա ղեկավար **Դեյվիդ Բարնեան**: Սակայն Իրանի պետական կառավարման համակարգի ճկունությունը, անվտանգության կառույցների կազմակերպվածությունը եւ ղեկավարության ցանցային կառուցվածքը թույլ չտվեցին այդ ծրագրի իրականացումը:

Պակաս կարեւոր չէր միջուկային ծրագրի հարցը: Թրամփի վարչակազմի համար առանցքային նշանակություն ունեին երկու խնդիր՝ «զրոյական հարստացման» սկզբունքի պարտադրումը եւ հարստացված ուրանի պաշարների ոչնչացումը կամ վերահսկողության տակ վերցնելը:

2025 թվականի հունիսյան առաջին պատերազմից հետո Թրամփը հայտարարեց, թե Իրանի միջուկային ծրագիրը ոչնչացվել է: Սակայն հետագա պաշտոնական գնահատականները ցույց տվեցին, որ այդ պնդումը չի համապատասխանում իրականությանը: Հենց այդ պատճառով միջուկային թեման տեղափոխվեց բանակցային օրակարգ՝ ռազմական ճանապարհով չլուծված խնդիրը քաղաքական մեխանիզմներով կարգավորելու նպատակով:

Նույն տրամաբանությունն էր գործում նաեւ 40-օրյա պատերազմից առաջ: Իրանի դիմադրողականությունը Վաշինգտոնին մղեց նոր ռազմական գործողությունների՝ «իրանական թնջուկի» վերջնական լուծման ակնկալիքով:

Սակայն երկրորդ պատերազմը նույնպես չապահովեց ցանկալի արդյունքը:

Իրանից հարստացված ուրանի պաշարների դուրսբերման ծրագիրը չիրականացավ: Թրամփը հետագայում դա բացատրեց այն հանգամանքով, որ նման գործողությունը պահանջելու էր ամերիկյան զինուժի երկարատեւ ներկայություն Իրանի տարածքում: Փաստացի սա նշանակում էր, որ միջուկային խնդրի ռազմական լուծման տարբերակը սպառվել է:

Նույն պատկերն է հրթիռային ծրագրի հարցում: Եթե պատերազմի նախօրեին դրա սահմանափակումը ներկայացվում էր որպես առաջնահերթ նպատակ, ապա ձեռքբերված փոխըմբռնման հուշագրում այդ թեման ընդհանրապես չի հիշատակվում:

Ավելին, 40-օրյա պատերազմի ընթացքում հրթիռային համակարգերը դարձան Իրանի ռազմական ռազմավարության առանցքային գործիքը՝ ցույց տալով, որ Թեհրանը չի պատրաստվում հրաժարվել այդ կարողություններից:

Հատկանշական է նաեւ, որ բանակցությունների ավարտական փուլում Թրամփն արդեն խոսում էր ոչ թե «զրոյական հարստացման», այլ ուրանի հարստացման սահմանափակ մակարդակների մասին, որոնք չեն կարող ծառայել ռազմական նպատակների: Այս փոփոխությունն ինքնին վկայում է ԱՄՆ դիրքորոշման էական վերանայման մասին:

Փաստորեն, Իրանին հաջողվել է պահպանել ուրանի հարստացման սկզբունքային իրավունքը: Քննարկման առարկա կարող են լինել միայն այդ գործընթացի ծավալներն ու ժամկետները: Այդ իմաստով ձեռքբերված պայմանավորվածությունն ավելի շատ արտացոլում է ուժերի իրական հարաբերակցությունը, քան Վաշինգտոնի սկզբնական պահանջները:

Համաձայնության ամենակարեւոր արդյունքներից մեկը, թերեւս, Հորմուզի նեղուցի հարցն է: Թրամփի հայտարարությունից հետո պարզ դարձավ, որ նեղուցը շարունակելու է գործել բաց ռեժիմով: Իրանը, իր հերթին, ընդգծեց, որ անցման տուրքեր չեն գանձվի, սակայն նավագնացության անվտանգությունն ու ուղեկցման ծառայությունները կմնան վճարովի՝ միջազգային ծովային իրավունքի նորմերին համապատասխան:

Սակայն խնդրի էությունը միայն վճարների հարցը չէ: Վերջին պատերազմի ընթացքում Հորմուզի նեղուցի հնարավոր արգելափակման թեման հերթական անգամ ցույց տվեց, որ Իրանը պահպանել է համաշխարհային էներգետիկ հաղորդուղիների վրա ազդելու կարեւոր լծակներ: Անկախ նրանից՝ այդ հնարավորությունը երբեւէ կկիրառվի, թե ոչ, դրա գոյությունն ինքնին ձեւավորում է տարածաշրջանային եւ գլոբալ դերակատարների հաշվարկները:

Այս հանգամանքը Թեհրանին տրամադրում է ոչ միայն զսպման միջոց, այլեւ արտաքին քաղաքական ազդեցության լրացուցիչ գործիք:

Նույնքան ուշագրավ է, որ ձեռքբերված համաձայնության մեջ որեւէ հիշատակում չկա Իրանի տարածաշրջանային քաղաքականության կամ «պրոքսի ուժերին» աջակցության դադարեցման մասին: Մինչդեռ հենց այդ հարցը Վաշինգտոնը պատերազմի սկզբում ներկայացնում էր որպես առանցքային պահանջներից մեկը:

Ընդհանուր առմամբ, Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ ձեռքբերված համաձայնությունը ցույց է տալիս բավականին հետաքրքրական օրինաչափություն. փաստաթղթի բովանդակության մեջ գրեթե չեն արտացոլվել այն նպատակները, որոնց իրականացումը հայտարարվել էր ռազմական գործողությունների մեկնարկին: Ընդհակառակը, բանակցային գործընթացը հիմնականում արձանագրել է այն սահմանները, որոնցից այն կողմ ռազմական ուժի կիրառումը ցանկալի արդյունք չի տվել:

Ամփոփում

Իրանի համար այս պատերազմը դարձավ պատմական նշանակության փորձություն: Երկիրը միաժամանակ առերեսվեց աշխարհի երկու խոշոր ռազմական եւ տեխնոլոգիական տերությունների ճնշմանը, սակայն չկորցրեց տարածքներ, չբախվեց պետական համակարգի փլուզման եւ պահպանեց ռազմավարական կարեւոր ուղղությունների նկատմամբ վերահսկողությունը:

Հատկապես կարեւոր դեր խաղաց Հորմուզի նեղուցը, որը Թեհրանին հնարավորություն տվեց օգտագործել իր աշխարհագրական դիրքի առավելությունները եւ հակակշռել հակառակորդների ռազմական գերազանցությունը:

Արդյունքում Իրանը ոչ միայն պահպանեց իր հիմնական դիրքերը, այլեւ բանակցային գործընթաց մտավ ավելի ամուր դիրքերից, քան կարելի էր ակնկալել պատերազմի սկզբում:

Պատերազմը ցույց տվեց նաեւ Իրանի պետական համակարգի կենսունակությունը: Նույնիսկ ղեկավար կազմի դեմ ուղղված հարվածների պայմաններում երկիրը կարողացավ պահպանել կառավարման շարունակականությունը եւ ցուցադրել բարձր աստիճանի դիմադրողականություն: Սա վկայում է, որ իրանական պետականությունը հիմնված է ոչ թե առանձին անհատների, այլ կայացած ինստիտուտների վրա:

Միեւնույն ժամանակ, Միացյալ Նահանգներին չհաջողվեց ձեւավորել այնպիսի լայն միջազգային կոալիցիա, ինչպիսին ձեւավորվել էր Իրաքի կամ Աֆղանստանի պատերազմների ընթացքում: Նույնիսկ Վաշինգտոնի ամենամոտ դաշնակիցները չցուցաբերեցին այնպիսի ներգրավվածություն, որը կարող էր վճռորոշ ազդեցություն ունենալ հակամարտության ելքի վրա:

Այս հանգամանքների համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պատերազմը չապահովեց Վաշինգտոնի կողմից հայտարարված ռազմավարական նպատակների իրականացումը, մինչդեռ Իրանը կարողացավ պահպանել իր հիմնական դիրքերը եւ դրանք վերածել քաղաքական բանակցություններում լրացուցիչ առավելությունների:

Սպասենք Շվեյցարիայում ուրբաթ օրը նախատեսված Իրան-ԱՄՆ համաձայնագրի ստորագրմանը՝ հույս ունենալով, որ այս անգամ շաբաթը ուրբաթից առաջ չի գա:

«Հայաստանի ընտրություններում չափազանց շատ բան էր դրվում խաղասեղանին»

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

«Խորհրդարանական ընտրությունների նախօրեին Հայաստանում նախընտրական արշավն ավարտվում է ուժեղ լարվածության մթնոլորտում»,- հունիսի 7-ին գրում էր ֆրանսիական Le Journal du Dimanche կիրակնօրյա թերթը: Խախտումներ, եկեղեցու հետ հակամարտություն եւ արտաքին միջամտություն. Հայաստանի ընտրություններում չափազանց շատ բան է դրվում խաղաքարտին, վերլուծում է Վանդեի (Ֆրանսիա - **Գ. Մ.**) ICES կաթոլիկ ինստիտուտի դասախոս **Ռաֆայել Օկլերը**: Քարոզարշավը, որն ըստ էության, սկսվել էր դեռ անցյալ ամռանը, չափազանց անհանգիստ է եղել, նշում է նա եւ ավելացնում, թե դա պատահական չէ. իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հեռու էր (իր հաղթանակի հարցում) վստահ լինելուց, մտահոգության առիթ էին տալիս անցկացված որոշ հարցումները:

Ըստ հրապարակման, միայն մեկ շաբաթվա ընթացքում՝ մայիսի 8-ից 14-ը, «Արդար քվե» դիտորդական առաքելությունը (Հայաստան) գրանցել է ընտրական օրենսդրության 71 խախտում: Դրանց մեծ մասը վերաբերել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ իշխանության եւ վարչական ռեսուրսների չարաշահման 16 դեպք, ատելության հրահրման ու բարոյական ճնշման 12 դեպք, ընտրարշավին երեխաների անօրինական ներգրավման 8 դեպք, ցցուն օրինակը՝ Արագածոտնի մարզում: «Արդար քվեի» դիտորդները, ինչպես նկատվում է, երկու անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողով բողոքներ են ներկայացրել իշխող կուսակցության ու նրա ղեկավարի դեմ, բայց դրանք անտեսվել են:

⇨6

«Առանց արտաքին ճնշման ՀՀ-ն կապերը չի խզի որեւէ մեկի, այդ թվում՝ ՌԴ-ի հետ»

⇨1 Իշխող կուսակցության նախագահ **Փաշինյանն** ընտրողներին խոստացավ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր, տնտեսական բարգավաճում, իսկ ընդդիմությանը որակեց «քրեական օլիգարխիա» եւ «պատերազմի կուսակցություններ», գրում է Արեն Վանյանը՝ ներկայացնելով ընտրության արդյունքը՝ ՔՊ հաղթել է՝ ձայների 49,75 տոկոս հավաքելով, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 23,37 տոկոսով երկրորդ տեղում է, երրորդ տեղում էլ Ռոբերտ Քոչարյանի «Հայաստան» դաշինքն է՝ 9,92 տոկոսով: Վանյանը նշում է, որ ընդդիմադիր երկու դաշինքներն էլ ռուսամետ օրակարգ են հետապնդում, որոշ ընտրատեղամասերում հնարավոր վերահաշվարկից հետո խորհրդարանում կարող է տեղեր ստանալ մեկ այլ ռուսամետ կուսակցություն:(Առայժմ այս վերջինը չի հաստատվում-Ան. Հ.): Թե՛ ռուսամետ, թե՛ եւրոպամետ ընդդիմությունը Փաշինյանին մեղադրեց ամբոխահաճության (պոպուլիզմի) մեջ, մասնավորապես քննադատելով վարչապետին՝ արտաքին անլուրջ քաղաքականություն վարելու, Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների, քաղբանտարկյալների հանդեպ անտարբերության, Հայաստանում արցախցի փախստականների աղետալի վիճակի համար, շարադրում է Վանյանը եւ շարունակում՝ ընտրություններից երկու ամիս առաջ իրավիճակը սրվեց տարածաշրջանում արտաքին դերակատարների միջամտության պատճառով, ՀՀ-ն դարձրին իրենց վեճի թատերաբեմ. **Պուտինը** բացահայտ հորդորեց արտոնել ռուսամետ ուժերին մասնակցել ՀՀ ընտրություններին, իսկ ԵՄ-ն գագաթնաժողով անցկացրեց Երեւանում՝ աջակցություն հայտնելով Փաշինյանին: Մոսկվան սահմանափակեց հայկական ապրանքների ներմուծումը, հիշեցրեց ուկրաինական սցենարի մասին, ԵՄ-ն պատասխանեց ՀՀ-ին ֆինանսական աջակցությամբ, խոստացավ նոր օգնություն:

Ընտրությունից անմիջապես հետո ԵՄ բարձրաստիճան քաղգործիչները, նույնիսկ **Էրդողանը** հաղթանակի առթիվ շնորհավորեցին Փաշինյանին, փոխարենը Պուտինը լուռ է դեռ, անգամ ՌԴ օրվա առթիվ հունիսի 12-ին Փաշինյանի շնորհավորանքից հետո, գրում է վերլուծաբանը՝ կցելով նաեւ ՀՀ վարչապետի պատասխանը՝ «հուսով ենք, որ Պուտինը դեռ կշնորհավորի»:

Վանյանը կարծիք է հայտնում, թե ՀՀ-ում չէին կասկածում, որ Փաշինյանի կուսակցությունը հաղթելու է, սակայն սահմանադրական փոփոխությունների համար անհրաժեշտ երկու երրորդ մեծամասնության հարցն է էական, որը թույլ կտար ռազմավարական ծրագրեր իրագործել՝ առաջին հերթին սահմանադրության բարեփոխումներ, որ նախատեսում է ԼՂ-ին վերաբերող բոլոր հղումների դուրսթողնելը ՀՀ սահմանադրությունից:

«Փաշինյանի կառավարությունը հրապարակավ չի ընդունում, որ սահմանադրական բարեփոխումները Ադրբեջանի թելադրանքով են», գրում է Վանյանը, թվարկելով 2020-ից հետո բոլոր իրադարձությունները, որ Փաշինյանի իշխող կուսակցությանը դրել են խոցելի վիճակում՝ ԼՂ-ի պարտությունը, 2022-ին Ադրբեջանի ռազմական հարձակումը ՀՀ-ի վրա, Արցախի շրջափակումը, ԼՂ նախկին քաղաքական եւ ռազմական ղեկավարության պատանդառումը, 2023-ին ԼՂ հայ բնակչության էթնիկ զտումը, 2024-ին ռուսական խաղաղապահների դուրսբերումը ԼՂ-ից: «Փաշինյանը չկարողացավ ապահովել սահմանադրական մեծամասնություն, իսկ ռուսամետ ընդդիմությունը Աժ ում բավարար տեղ ստացավ բարեփոխումը խոչընդոտելու համար», գրում է սոցիոլոգը «The Pioneer»-ում հրապարակված ծավալուն հոդվածում՝ նշելով, թե «Ադրբեջանն անպայման կօգտագործի իրավիճակը Հայաստանին մեղադրելու, որ խաղաղության գործընթացը խափանում է, իսկ Ալիեւը նույնիսկ հիմա, առանց խաղաղության պայմանագիր կնքելու էլ զգալի օգուտ է քաղում տարածաշրջանում ՀՀ-ի ունեցած թույլ դիրքից: Ադրբեջանի հետ ռազմական նոր հակամարտության վախը ստիպում է ՀՀ-ին նվաստացուցիչ զիջումների գնալ՝ ապագա խաղաղության պայմանագիրը ստորագրելու համար: Հայության մի մասը չի հասկանում, թե ինչու խաղաղության անհրաժեշտությունը ծագեց անցյալում կրած ծանր կորուստներից հետո, մյուս մասը չի հավատում, թե ստորագրումից հետո էլ խաղաղություն կլինի բռնապետական Ադրբեջանի հետ: Այդուհանդերձ Փաշինյանի կուսակցության համար կարեւոր է, որ Ադրբեջանի հետ հակամարտությունը հայտարարի ավարտված՝ պատմական տեսանկյունից դրական ներկայացնելու, 2020-2023 թվականների ողբերգությունների պատասխանատվությունը թոթափելու համար», գրում է Վանյանը: «Իրականում, Հայաստանը չի ընտրում իր ցանկալի ապագան, այլ այն, որը կարող է ինքնիրեն արտոնել՝ թելադրված Հարավային Կովկասի քաղաքական ճարտարապետությամբ:

Այս պահին ՀՀ-ն միակ ժողովրդավար երկիրն է տարածաշրջանում: Բոլոր հարեւանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Իրանը, Թուրքիան ավտորիտար եւ բռնապետական են՝ օլիգարխիայի կամ կրոնական ֆունդամենտալիզմի տարրերով: ՀՀ-ի քաղաքական մեկուսացումն առավել սրվում է աշխարհագրական խոցելիությամբ: Այն պատճառ է դարձել, որ ՀՀ-ն կախվածության մեջ լինի ՌԴ-ից, որը վճռորոշ խաղացող է: Վերջին 30 տարում Հարավային Կովկասի հետ ՌԴ հարաբերություններն երբեք այսքան վատ չեն եղել: Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ դիվանագիտական հարաբերություններ չկան, սակայն ՌԴ-ին հաջողվել է պահպանել տնտեսական կապերը, նույնիսկ՝ ազդեցություն ունենալ երկրի ներքաղաքական իրավիճակի վրա: Ադրբեջանի հետ հարաբերություններում ՌԴ-ն «մեծ եղբոր» դերը զիջել է Թուրքիային:

Հետխորհրդային տարածքում Մոսկվան պատրաստ է դիմել ապակայունացման միջոցների, երբ երկրները փորձում են խուսափել նրա ազդեցությունից: Տարածաշրջանում ակտիվ են նաեւ ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն, որ Հարավային Կովկասում ամրապնդվելու պատրվակով փորձում են հայ-ադրբեջանական հարաբերությունները կարգավորել: ԱՄՆ-ն TRIPP- ի միջոցով ամրապնդում է ռազմավարական կապերը Իսրայելի եւ Ադրբեջանի հետ՝ ճնշելով Իրանին: ԵՄ-ն Ադրբեջանի կարիքն ունի որպես գազի եւ հումքի մատակարարի: Երբ ՌԴ-ն 2020-23 -ին անվտանգության երաշխավորի իր դերը չկարողացավ կատարել, ՀՀ-ն դիվերսիֆիկացման ուղին սկսեց: Պաշտպանական ոլորտում հարաբերություն է հաստատել Ֆրանսիայի, Հնդկաստանի հետ: Վերջինիս գլխավոր մրցակից Պակիստանը, նաեւ Իսրայելը Ադրբեջանի հետ սերտ ռազմական համագործակիցներ են: Ցարդ Ադրբեջանը կարողացել է հարաբերությունները կարգավորել Իսրայելի եւ Իրանի հետ, որի 93 միլիոնից առնվազն 15 միլիոնը էթնիկ ադրբեջանցի են: Իրանը բազմիցս քննադատել է TRIPP- ը եւ Իսրայելի դերը Ադրբեջանի անվտանգության քաղաքականության մեջ: Թուրքիան էլ դժգոհ է Իսրայելի ներկայությունից: Իսկ ՀՀ-ն շահել է, երբ մարդասիրական օգնություն է առաքել Գազա, ավելի ուշ՝ Լիբանան, որի համար Թուրքիան ժամանակավոր բացել է հայ-թուրքական ցամաքային սահմանը: ՌԴ 102-րդ ռազմաբազան ՀՀ-ում է, իսկ արեւելյան սահմանին գործում է ԵՄ դիտորդական առաքելությունը», գրում է Վանյանը:

«2020-ականների Հարավային Կովկասը հիշեցնում է աշխարհաքաղաքական դիմակահանդես, որտեղ դերերը՝ դաշնակիցներն ու հակառակորդներն անընդհատ փոխվում են՝ կարճաժամկետ շահեր սպասարկելու նպատակով: Սակայն այս տարածաշրջանում անցյալի երկար ստվերը մշտապես նախազգուշացնում է՝ դիմակահանդեսը կարող է վերածվել կոտորածի: Հետեւաբար ՀՀ արտաքին քաղաքականությունը Արեւմուտքի եւ ՌԴ-ի միջեւ ընտրություն ներկայացնելը չի արտացոլում իրականությունը», նշում է սոցիոլոգը՝ պարզաբանելով՝ «այդպիսի մեկնաբանությունները հանդիպում են արեւմտյան կամ ռուսական լրատվամիջոցներում, որ տարածաշրջանը նկարագրում են իրենց քաղաքական հակամարտությունների պրիզմայով: Իրականում Երեւանը ձգտում է ճիշտ հակառակն անել՝ տարածաշրջանի դերակատարների շահերի գոնե մասամբ համընկնեն, որ ինքը չդառնա բախման վայր»:

Խաղաղություն՝ ժողովրդավարության փոխարեն

Արեն Վանյանի ենթավերնագիրն անշուշտ տպավորիչ է, բայց «The Pioneer »-ի գերմանացի, եւրոպացի ընթերցողը դա կհասկանա՞: Առայժմ խաղաղություն բառի սուր անհրաժեշտություն է զգացվում ԵՄ տարածքում, ԳԴՀ-ում, երբ խոսքը ոչ թե ցեղասպանություն ապրած, վերապրածների մասին է, այլ՝ ՌԴ- Ուկրաինա ջարդը կանգնեցնելու:

«Ընտրություններից հետո Փաշինյանի կուսակցությունը շարունակում է կենտրոնանալ ռազմավարական երկու նպատակի վրա՝ շարունակել դիվերսիֆիկացման քաղաքականությունը, Բաքվի հետ ստորագրել խաղաղության պայմանագիրը: Հնարավոր է իշխող կուսակցությունը սկսի զտել ռուսամետ ընդդիմությանը՝ հետագայում սահմանադրական բարեփոխումները հանրաքվեի դնելու համար, կարծիք է հայտնում հոդվածագիրը եւ շարունակում՝ ընտրարշավի ընթացքում դիտավորյալ ձերբակալել են ընդդիմության ներկայացուցիչներին, չարաշահել վարչական ռեսուրսը, հակառակորդների հանդեպ ատելության հռետորաբանություն կիրառել: Որքան էլ պարադոքսալ լինի՝ Ադրբեջանի հետ խաղաղության անհրաժեշտությունը, նույնիսկ առերեւույթ՝ կեղծ խաղաղությունը ռիսկ է պարունակում. Հայաստանը կկորցնի իր ժողովրդավարական կառավարման ձեւը, կմիանա տարածաշրջանի ավտորիտարների շարքին»: «Հենց այստեղ կարող է Արեւմուտքը վճռորոշ դեր խաղալ, կարծիք է հայտնում Վանյանը: ԵՄ-ն, հատկապես Թրամփի վարչախումբը անհրաժեշտ լծակներն ունի Ադրբեջանին ճնշելու, համոզելու նրան հրաժարվել ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների առավելապաշտ պահանջից: Նման քայլը հնարավորություն կտա Արեւմուտքին պահպանելու ժողովրդավարական, համագործակցող Հայաստանը, ռազմավարական տեսանկյունից ամրապնդելու հարաբերություններն Ադրբեջանի հետ, հաստատվելու՝ որպես խաղաղության գործընթացի գլխավոր միջնորդ»:

Վերլուծաբանը հիշեցնում է, որ ՌԴ հատկապես զգայուն է Հարավային Կովկասում Արեւմուտքի ամրապնդման փորձի հանդեպ եւ ակնկալելի է, որ կանի ամեն ինչ խափանելու ՀՀ- Ադրբեջան խաղաղության գործընթացը: «ՌԴ-ն ունի դրա համար անհրաժեշտ միջոցները՝ ՀՀ երկաթուղային ենթակառուցվածքները նրա վերահսկողության տակ են, ռուսամետ կուսակցությունները ստացել են խորհրդարանական լեգիտիմություն, իսկ Գյումրիում ռազմաբազան ակտիվ է»:

Հոդվածագիրն իր վերլուծությունն ավարտում է հետեւյալ պարբերությամբ. «Ընտրություններից հետո Փաշինյանի կուսակցության մանեւրելու հնարավորությունն ավելի է սեղմվել: Այն հավանաբար կշարունակի դիվերսիֆիկացման զգուշավոր ռազմավարությունը, որ թույլ է տալիս ազատվել ՌԴ-ի լիակատար վերահսկողությունից: Իշխող կուսակցությունը կփորձի հնարավորինս երկար հավասարակշռություն պահպանել տարածաշրջանային դերակատարների միջեւ՝ միաժամանակ ջանալով խաղաղության համաձայնագիր կնքել Ադրբեջանի հետ:

Առանց արտաքին ճնշման ՀՀ-ն կապերը չի խզի որեւէ մեկի, այդ թվում՝ ՌԴ-ի հետ», գերմանական «The Pioneer »-ում գրում է սոցիոլոգ Արեն Վանյանը:

Լուսանկարը՝
«The Pioneer»-ի կայքի

Գեորգի Սահակով. «Ամեն ինչ մեր կամքի մեջ է»

Ուզբեկստանի հայերի մասին

ԱՐԵՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ՏԱՇՔԵՆԴ - Հանրային գործիչ, լրագրող Գեորգի Սահակովը (ծն. 1960, Տաշքենդ) Ուզբեկստանի հայ համայնքի ակտիվ անդամներից է: 2008 թվականից հայկական «Դեպի ապագա» ամսագրի գլխավոր խմբագիրն է: Հեղինակ է Սփյուռքում մայրենի լեզվի պահպանման, Ուզբեկստանի այլ ազգային համայնքների եւ հայ Սփյուռքի կառույցների հետ կապերի, աշխարհում տեսանելի հետք թողած ականավոր մարդկանց մասին հոդվածների, որոնք հրապարակվել են սփյուռքյան հայտնի մի շարք լրատվամիջոցներում:

-Հարգելի՛ Գեորգի, ինչպե՞ս կբնութագրեք Ուզբեկստանում հայերի ներկայության պատմությունը:

-Հայ վաճառականներն ու քրիստոնյա միսիոներները Կենտրոնական Ասիայում հայտնվել են դեռեւս Մետաքսի մեծ ճանապարհի ձեւավորման ժամանակ: Դարեր անց սկսվել է ներգաղթի նոր ալիք՝ կազմված հազարավոր հմուտ արհեստավորներից, որոնց Լենկթեմուրն իր երկրորդ արշավանքից հետո վերաբնակեցրել է Սամարղանդում՝ իր մայրաքաղաքի շինարարության համար:

Թեեւ հայերը քրիստոնյաներ էին, կայսրության տարածքում նրանք հալածանքների չեն ենթարկվել: Վերաբնակների թվում եղած Կարապետ Ջուղայեցի քահանան դարձել է տեղի քրիստոնյա համայնքի եպիսկոպոսը: Սա տեղական բնակչության դրսեւորած հանդուրժողականության ուշագրավ օրինակ է:

Հայերի ներգաղթի երրորդ ալիքը տեղի է ունեցել 19-րդ դարի վերջին: Այդ ժամանակ գյուղացիներ եւ հմուտ բանվորներ ընտանիքներով տեղափոխվել են այստեղ՝ աշխատանք գտնելու Անդրկասպյան երկաթուղու շինարարության վրա: Միաժամանակ վերաբնակները հիմնել են հայկական դպրոցներ՝ իրենց ազգային ինքնությունը պահպանելու նպատակով:

Մեր ընտանիքում հաճախ էին հիշում 1920-1930-ական թվականների Տաշքենդի Հայ բանվորական տունը: Այն ունեցել է աղոթասենյակ, դպրոց եւ նույնիսկ սիրողական թատրոն: Հայկական թատրոնը գործել է մինչեւ 1936 թվականի սկիզբը, երբ խորհրդային իշխանությունները հարկադրաբար փակել են այն՝ մյուս բոլոր հայկական հասարակական կազմակերպությունների հետ միասին: 1940-ականների սկզբին փակվել է նաեւ դպրոցը, իսկ Հայ բանվորական տան շենքը սկզբում վերածվել է պահեստի, ապա քանդվել:

Շատ տարիներ անց գրքերից իմացա, որ նման Հայ բանվորական տներ եղել են ամբողջ Կենտրոնական Ասիայում:

Այն փաստը, որ Ուզբեկստանի Հանրապետությունը շարունակում է մնալ բազմազգ երկիր, որտեղ իրավական պաշտպանությամբ ապրում են ավելի քան հարյուր ազգությունների ներկայացուցիչներ, արտացոլում է ուզբեկ ժողովրդին բնորոշ հատկանիշները՝ գրկաբացությունը, իմաստությունը, ճկունությունն ու բոլոր ծագումների եւ հավատքների մարդկանց նկատմամբ հարգանքը:

Այս հրաշալի ժողովուրդը մարդասիրության վառ օրինակ ցուցադրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Խորհրդային Միության գերմանական բռնազավթման ենթարկված շրջաններից հարյուրավոր գործարաններ տարհանվեցին Ուզբեկստան, իսկ հարյուր հազարավոր մարդիկ այնտեղ ապաստան գտան:

-Ենթադրում եմ, որ, ինչպես Կենտրոնական Ասիայի շատ հայեր, ձեր ընտանիքն էլ արմատներով Արցախից է:

-Ճիշտ այդպես: Ծնվելով ավանդական հայ ընտանիքում՝ ես մինչ օրս իմ վաղ մանկության տարիները հիշում եմ որպես կյանքիս ամենաերջանիկ շրջանը: Մեր տանը հայերեն խոսքը հնչում էր տատիկիս ու պապիկիս շուրթերից, իսկ փոխադարձ սիրո, բարության եւ մարդկային ներդաշնակ հարաբերությունների արժեքները մեզ փոխանցվում էին ամեն օր: Դա նաեւ իմ առաջին հաղորդակցությունն էր հայկական ավանդույթին:

Տատիկս՝ Աստղիկը եւ պապիկս՝ Մարկոսը, որոնք խոսում էին Արցախի բարբառով եւ Հադրութի գյուղական դպրոցում ընդամենը երեք տարվա կրթություն էին ստացել, օգնեցին ինձ կատարել առաջին քայլերս Մաշտոցի այբուբենի եւ գրական հայերենի ուսուցման ճանապարհին: Նրանք իրենք հնարավորություն չէին ունեցել շարունակելու ուսումը, քանի որ շատ վաղ էին հրաժեշտ տվել մանկությանը՝ ծնողներին օգնելու համար: Մի՞թե դա յուրատեսակ երեւույթ չէր: Նրանց թոռը շարունակելու էր հայերենին տիրապետել հիմնականում ինքնուրույն:

Հայրս գործուղումից վերադառնալիս Մոսկվայից իր նախադպրոցական տարիքի որդու համար բերեց առաջին հայերեն դասագիրքը: Դա Արարատ Ղարիբյանի հայերենի ինքնուսույցն էր: Դպրոցական եւ համալսարանական տարիներին ես կրթություն եմ ստացել ռուսերենով եւ մեծացել եմ բազմազգ միջավայրում: Ունեի բազմաթիվ ուզբեկ, ռուս եւ հրեա ընկերներ, ինչն արժեքավոր փորձառություն էր: Միեւնույն ժամանակ, ինքնուրույն շարունակում էի առաջ շարժվել հայերենի ուսման ճանապարհով: Իմ սերունդը, ինչպես նաեւ մեր նախորդը, ազգային ինքնության հետ կապված բազմաթիվ հարցեր լուծում էր ռուսերեն թարգմանված հայկական գրականության ընթերցանության միջոցով, քանի որ ռուսերենը միջէթնիկական հաղորդակցության լեզուն էր: Խորհրդային Միությունում գործում էր գրական թարգմանության բացառիկ դպրոց: Առաջին անգամ ռուսերենով կարդացի Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Շիրազի եւ Ավետիք Իսահակյանի պոեզիան, Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը, Հրանտ Մաթեւոսյանի եւ Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունները, ինչպես նաեւ Գեւորգ Էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին»-ը: Իմ սիրելի հայ հեղինակների ցանկը տարիների ընթացքում չի փոխվել, իսկ Սարոյանն ու Էմինը ժամանակի ընթացքում նույնիսկ ավելի հարազատ են դարձել ինձ: Էմինն առանձնապես մոտ է ինձ, քանի որ մենք ունենք նույն՝ հիդրոտեխնիկի մասնագիտություն: Տարիներ անց՝ 2015 թվականին, արժանացա Հայաստանի Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալին:

-Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան համայնքի ներսում Ուզբեկստանի անկախացումից հետո: Ո՞ր գործոնն է ազգային ինքնության պահպանման եւ արմատներին վերադառնալու գլխավոր խթանը:

-Դժվար հարց է, սակայն, թերեւս, դա բնորոշ է ոչ միայն Սփյուռքի հայերին, այլեւ մյուս էթնիկ խմբերին, որովհետեւ 1980-ականների վերջին բոլորն անկեղծ ցանկությամբ ձգտում էին վերադառնալ իրենց արմատներին: 1989 թվականին՝ Խորհրդային Միության գոյության վերջին շրջանում, հայ մշակութային կենտրոններ ստեղծվեցին Տաշքենդում, Սամարղանդում եւ Անդիջանում: Ուզբեկստանի հայ համայնքի վերածննդի ակունքներում կանգնած է ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի **Թամարա Խանում-Պետրոսյանը**: Մեր նշանավոր հայրենակցուհին ցանկանում էր, որ մայրաքաղաքի մշակութային կենտրոնը տեղակայվեր իր անունը կրող, վերջերս բացված հուշաթանգարանի հարկի ներքո:

Անկեղծ ասած, համայնքը ծնվեց ոչ միայն ոգեշնչող կարգախոսների, այլեւ ծանր ու հետեւողական աշխատանքի շնորհիվ: Նորաբաց մշակութային կենտրոնի հիմնադիրներից շատերը նախկինում եղել էին Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության անդամներ: Նրանք կրքոտ բանավիճում էին ազգային ավանդույթի գրեթե յուրաքանչյուր մոռացության մատնված մանրուքի շուրջ: Հավանաբար դա բնական գործընթաց էր: Վեց տասնամյակ էր անցել այն պահից, երբ խորհրդային իշխանություններն արգելել էին ազգային մշակույթի զարգացած կառույցները: Դա իսկապես բացասաբար էր անդրադարձել արտերկրի հայության մի քանի սերունդների ազգային ոգու վրա: Մարդիկ պարզապես մոռացել էին, թե ինչպես կարելի է միասին ապրել եւ գործել հանուն ընդհանուր ազգային շահերի:

Հասկանալով, որ այդ գործընթացը կարող է երկար ձգվել, ես որոշեցի ժամանակ չկորցնել: Հավաքեցի աշակերտների երկու խումբ եւ, չսպասելով մայրենի լեզվով ուսուցչի հայտնվելուն, սկսեցի նրանց սովորեցնել հայոց այբուբենն ու լեզուն: Դրանք հրաշալի տարիներ էին՝ ոչ միայն մեր ընդհանուր արմատներին վերադառնալու, այլեւ ինքնաճանաչման ճանապարհին:

1993 թվականին հիմնադրվեց մեր հայկական կիրակնօրյա դպրոցը, որը շատ արագ ներգրավեց մեծ թվով երեխաների եւ մեծահասակների՝ մայրենի լեզուն եւ ավանդույթներն ուսումնասիրելու նպատակով: Սամարղանդի հայերը՝ երեխաներից մինչեւ տարեցներ, մասնակցեցին 1905 թվականին կառուցված եւ խորհրդային իշխանությունների որոշմամբ փակված Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու վերականգնմանը: 1995 թվականին, տասնամյակների արգելքից եւ վերանորոգումից հետո, այն իր դռները բացեց հավատացյալների առջեւ՝ դառնալով ժամանակակից Կենտրոնական Ասիայում վերաբացված առաջին հայկական եկեղեցին: 2007 թվականին հայկական եկեղեցի բացվեց նաեւ մայրաքաղաքում: Ամեն տարի Սամարղանդի Սուրբ Աստվածածին եւ Տաշքենդի Սուրբ Փիլիպոս եկեղեցիներում նշվում են Սուրբ Ծնունդը, Տյառնընդառաջը, Զատիկը, Վարդավառը, Խաղողօրհնեքը եւ Սուրբ Թարգմանչաց տոնը:

-Իսկ ի՞նչ ենթակառուցվածքներ եւ ծրագրեր է պահպանում համայնքը:

-Մի քանի տարի անց, առաջին հայացքից, պատկերը թվում էր գրեթե իդեալական՝ իր գրավիչ գույներով: Թեեւ Ուզբեկստանի պետությունն ու կառավարությունը մեզ եւ երկրում գործող մյուս ազգային համայնքներին ցուցաբերում են ոչ միայն բարոյական, այլեւ ֆինանսական աջակցություն եւ շատ բան են անում մեզ համար, այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ «դեպի տաճար տանող ճանապարհին»՝ դրա լայն իմաստով, իրական վերածնունդ չի երեւում: Կիրակնօրյա դպրոցն այլեւս լեցուն չէ աշակերտներով, իսկ եկեղեցին բազմամարդ է լինում միայն Սուրբ Ծննդյան եւ Զատկի մեծ տոներին: Սովորական օրերին Ուզբեկստանի մոտ հիսուն հազար հայերից միայն մոտ մեկ տոկոսն է մնում համայնքային կյանքի ակտիվ մասնակից:

1993 թվականին հայկական կիրակնօրյա դպրոցի բացումից ի վեր այն շարունակում է մնալ համայնքային կյանքի կարեւոր բաղադրիչը: Մշակութային կենտրոնի բազմաթիվ հաջողված ծրագրեր ծնվել են հենց այնտեղ, այդ թվում՝ պարային ստուդիան, «Արվեստ» ստուդիան եւ նույնիսկ «Տաշքենդի հայեր» հումորային թիմը, որը 2003 թվականին դարձավ Ուզբեկստանի չեմպիոն:

Բացի դպրոցում դասավանդելուց, ես նախաձեռնել եմ մի շարք ծրագրեր, այդ թվում՝ «Դար» սիրողական թատրոնը: Մեր երիտասարդների հետ բեմադրել ենք ներկայացումներ՝ հիմնված Հովհաննես Թումանյանի հեքիաթների, Գրիգոր Նարեկացուն նվիրված ստեղծագործությունների վրա, ինչպես նաեւ մեր սեփական երաժշտական ներկայացումը՝ ներշնչված Պըլը-Պուղու պատմություններից եւ Առնո Բաբաջանյանի երգերից: Այստեղ ստեղծվեց նաեւ երիտասարդական բանավեճի ակումբ, իսկ «Մեր օջախ» ակումբում հանդիպումներ էինք կազմակերպում «Դեպի ապագա» ամսագրի ընթերցողների հետ: Այդ միջոցառումները տեղի էին ունենում Թամարա Խանումի հուշաթանգարանում:

⇨6

Առեղծվածային վրձնի տիրակալը

Փարավոն Միրզոյան. անուն՝ որ վաղուց իր ուրույն տեղն ու դերն ունի հայ մշակութային արժեհամակարգում ու միջազգային հարթակում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի յուրաքանչյուր ստեղծագործություն արվեստի յուրօրինակ ու մնայուն գործ է: Ինտելեկտուալ արվեստագետ, որի վրձնահարվածից ծնվում է կյանք ու սեր: Տիեզերքը բարեհաճ է գտնվել նրա հանդեպ եւ շռայլորեն շնորհել է տաղանդ: Աշխատասիրության, ձգտման ու ակադեմիական փայլուն կրթության շնորհիվ այն հասել է կատարելության:

Վարպետի արվեստում չկա կրկնօրինակում, նա հարթել է իր ուղին՝ ձեւավորելով ուրույն ձեռագիր, ոճ, գեղագիտական ճաշակ, համարձակ ներկայանալի ես:

Հայաստանի ամենագեղեցիկ վայրերից մեկում, Սյունյաց աշխարհում ծնունդ առած արվեստագետի ոգեշնչման աղբյուրը հենց հայրենիքն է: Այն առավել արտացոլված է կտավներում, որոնք շնչում են հայրենի հողի, ջրի, արեւի, լեռների, ծառ ու ծաղկի համահունչ սինթեզով: Յուրաքանչյուր կտավում ներդաշնակ, հարմոնիկ լուծումներով է միահյուսված պոեզիան, երաժշտությունը եւ գեղանկարչությունը: Միրզոյանի գունապնակը վառ է, ուրախ, նա սեղծագործում է մաժորային տոնայնության մեջ: Անգամ իր հոգու ու ժողովրդի ցավը, վիշտը, կարոտը հանգուցալուծում է մտավորականին վայել ճշգրիտ ուղով՝ դեպի լույսը, արեւն ու կյանքը:

Խիստ ու խրոխտ այս արվեստագետի հոգին իրականում շատ նուրբ ու փխրուն է. այդ են վկայում այն բազմաթիվ կտավները, որոնք զարդարում ու լուսավորում են Հայաստանի ու տարբեր երկրների շատ թանգարաններ: Չափազանց նուրբ, զգայական գիծ կա նրա մեջ, որ հասնում է երկնային սահմանագծին: Նա կարողանում է առանց ավելորդ ջանք գործադրելու հմտորեն որսալ ակնթարթը եւ հավերժացնել:

Որպես բարձր մտավորական կերտել ու կերտում է գործեր, որ մեր ժողովրդի մշակութային ժառանգության հաստատուն մաս են կազմում: Փարավոն Միրզոյանի արվեստը արդիական է ու համամարդկային: Ունենալով անսահմանափակ ստեղծագործական մտահորիզոն, նա կոտրել է բոլոր կարծրատիպերը՝ հատելով անսահմանության շեմը, չդավաճանելով իր ես-ը, դավանած հոգեւոր- բարոյական արժեքները եւ ազգային դիմագիծը: Նրա արվեստը բազմաժանր է, ընդգրկում է ռապսոդիաներ, ռեքվիեմներ, էտյուդներ, մինչեւ անգամ «Թռչնի համբույր» պրելյուդ՝ ի դեմս բնապատկերների, նատյուրմորտների, դիմանկարների, գծանկարների: Երաժշտափիլիսոփայական ելեւէջները վառ արտահայտված են նկարչի արվեստում: Յուրաքանչյուր ոք դիտելով նրա կտավները՝ կտեսնի, կլսի այն հոգեհմա երաժշտությունը, որն այդ պահին համահունչ է իր սրտի զարկին ու կյանքի ռիթմին: Նա գտել է մարդկային գենետիկ կոդի առեղծվածը եւ կարողացել վրձնահարվածով՝ հավերժացնել ու աշխարհին ներկայացնել բարձրագույն սիրո դրսեւորումները, թողնելով այն լույսն ու ստվերը, որ առկայծում է սատանայական կրքից մինչեւ կապույտ անուրջներ:

Ներթափանցելով նկարչի մոգական աշխարհ, թվում է բացահայտում ես անտեսանելին, անիրականը, սակայն հեղինակն ունի գաղտնիք, որը հասու չէ սովորական մահկանացուներին: Փարավոնն է թելադրում տեմպն



ու ռիթմը իր առեղծվածային կտավի, որի բանալին միայն ինքն ունի: Ճշգրիտ, հարմոնիկ լուծումներով գունային խաղը նրա ստեղծագործություններում հնչում է իբրեւ կատարյալ տաղ, որտեղ անգամ դադարն ունի իր մեղեդին:

Օժտված արվեստագետի կյանքում գերիշխում է սերը, որն էլ իր շնորհին միաձուլվելով՝ ստեղծում է գլուխգործոցներ:

2026 թվականի ամանորյա հեքիաթը հրեղեն ձիու կերպարն է, որ պատկերել է Վարպետը, կարծես երազից ծնված մի տեսիլք: Կապույտը, որպես խաղաղության ու վեհության խորհրդանիշ, ճերմակը՝ աներեւույթ հրաշքի ծնունդ: Հստակ պատկերված է փերու բերած ավետիսը եւ մոգական ալյակների խաղը՝ որպես հաղորդություն մարդկությանը:

Եվ այն հնչում է Սուրբ ծննդյան գիշերը՝ իբրեւ «Տաղ Աստվածածնա»...

Գարնանամուտին գույների մաեստրոյի սիրառատ ու երփներանգ ներաշխարհից ծնունդ է առել մեկ այլ գլուխգործոց: Նա կտավին է անմահացրել « Եդեմական պարտեզ՝ նրբագեղ հայուհու ծաղկունքով»: Այստեղ նկարագրված է կյանք, սեր ու կին, որտեղ իշխում է կանացի նրբությունը, քնքշությունը, վեհությունը: Ծաղկած պարտեզը կնոջ բույրն ունի՝ վարդագույն կյանքի խորհրդով: Ըստ Փ. Միրզոյանի, վրձնի կտավը հնչում է Սայաթ Նովայի քնարական սիրերգությամբ, իրական ու երեւակայական աշխարհում:

Յուրաքանչյուր գաղափար, որը արդեն կտավ է դառնում, ունի իր ասելիքը, տրամադրությունը, զգացմունքը եւ, իհարկե, տիեզերքից եկող ուժը, որը հենց հիմքն է ճշմարիտ արվեստի եւ արվեստագետի առաքելության:

...Ապրիլի 24, խորհրդանշական երեք մեկ՝ 111 տարի.

Փարավոն Միրզոյան, մտավորականը, արվեստագետը, ՀՀ ժողովրդական նկարիչը եւ հայ ազգի նվիրյալ զավակը, հայրենիքում ապրող եւ արարող անձը՝ իր մտորումներով, հայրենիքի սպիացած, բայց չմոռացվող վերքերի ցավերով տարված, այդ օրը երեկոյան իրենից անկախ, վերին ուժերի մղումով՝ կյանքի է կոչում եւս մի գլուխգործոց՝ «Վերածնունդ»: Հայ քրիստոնեա ազգի դարավոր պատմությունն է այս կտավում, որը վերածնվելով բազմիցս՝ ապրելով ապրեցնում է, հնչելով մաժորային տոնայնությամբ :

Բելառուսիայի հանրապետության ազգային արվեստի թանգարանի գլխավոր տնօրեն, արվեստի վաստակավոր գործիչ՝ **Վլադիմիր Պրոկոպցովը** նկարչի տեղի անհատական ցուցահանդեսից տպավորված՝ որակել է նրան հայ ազգի խիստ հազվագյուտ նկարիչ. «Փ. Միրզոյանի արվեստը բաց պատուհան է դեպի տիեզերք, որտեղ Վարպետի վառ աստղը շլացնում է, իր տաղանդի լույսով եւ առեղծվածով»:

Լեհ արվեստաբան **Բոգուսլավ Դեպտուլան** Լեհաստանում, Սոպոտի պետական արվեստի պատկերասրահում կայացած Վարպետի անհատական ցուցահանդեսից ոգեշնչված ասել է. «Հանգստություն, գեղեցկություն, կենդանի գույներ, ահա սա՛ է հաճույքի նկարչի՝ Փարավոն Միրզոյանի արվեստը»:

Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանի տնօրեն, արվեստի վաստակավոր գործիչ **Վլադիմիր Գուսեւը**, որ գույների մաեստրոյին գիտի դեռ ուսանողական տարիներից, փաստել է, որ ո՛չ բարձր կոչումներն ու տիտղոսները, ո՛չ վաստակած համբավն ու փառքը երկրի սահմաններից դուրս չեն խանգարել նրան մնալ այդպիսին, ինչպիսին կար ի սկզբանե, ինչով օժտված էր բնությունից, այն է՝ հրաշալի ՀԱՅ նկարիչ:

Արվեստագիտության թեկնածու **Եկատերինա Իզուֆատովան** նկատել է, որ նկարիչը ընկալում է աշխարհը ոչ միայն որպես վառ ու տոնական մի պատկեր, այլ նաեւ որպես զգացմունքների ու տրամադրությունների դրամա: Մեզ մնում է միայն զգալ այն, կռահել էներգիայի ուղղվածությունը, քողարկված կյանքը՝ արտահայտված Փարավոն Միրզոյանի անաղարտ պլաստիկության հմայքով:

Կարեն Միքայելյան արվեստաբանի կարծիքով՝ Փարավոն Միրզոյանի հոգեւոր եւ գեղարվեստական խորը, անդուլ որոնումների կենդանի ուժը նրան թույլ է տալիս նշանակալի տեղ զբաղեցնել վերջին շրջանի հայ արվեստի համատեքստում: Նա գտել է իր երկրի սեփական տեսանկյունը, երկրի ուրույն զգացողությունը, եւ դա է ամենակարեւորը:

Ըստ ՀՀ վաստակավոր ժուռնալիստ, արձակագիր **Տիգրան Նիկողոսյանի** ինքնատիպ այս նկարչի վրձնի ուժը ծննդավայրից է, ուր իր հայրենակից **Համո Սահյանի** բնորոշմամբ՝ ամպը ամպից է կախվում ու սարն հենվում է սարի ուսին, ուր թվացյալ միատոն գույներին մեկ էլ գալիս խառնվում են ուշացած գարնան կամ կարճատեւ ամռան մի օր լեռներում շքեղորեն ծաղկող ալպիական մարգագետիններում բացված ծաղկագորգերի գույները:: Միրզոյանի կտավներում տեսնելով գույների վարպետ համադրությունները զարմանալի է, թե ինչպես է սովորականի մեջ տեսել անսովորը, եւ հենց այստեղ է նկարչի հաղթանակը:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանաստեղծ **Հովիկ Հովեյանը** նկատել է՝ Փարավոնի գեղանկարչությունն իրականության գունապատկերային հապավումն է: Բոլոր երանգները սկսվում են մեծատառ առոգանությամբ եւ հասնում տրանսցենդենտալի եզրագծի:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ **Դանիել Երաժշտի** խոսքով՝ Փ. Միրզոյանի արվեստում կան շատ նուրբ, վիրտուոզ, ոգեղեն կտավներ, եւ կան երկրային, հողեղեն կրքերի բախումներ: Այս երկու բեւեռների միջեւ՝ ՄԱՐԴՆ է:

Հայ մեծանուն նկարչի աշխատանքները պահվում են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսիայի հանրապետությունների թանգարաններում եւ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Հնդկաստանի եւ այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հայաստանի ընտրություններում չափազանց շատ բան էր դրվում խաղասեղանին»

⇨2 Նշելով ընդդիմության եւ ոչ իր օգտին քվեարկության վրա ազդեցություն ունենալու ընդունակ բոլորի նկատմամբ վարչապետ **Փաշինյանի** ճնշումների աճը, վերլուծաբանը մասնավորապես վկայակոչում է Հայաստանում եկեղեցու նկատմամբ հալածանքի մասին «Քրիստոնեական համերաշխություն» միջազգային կազմակերպության (CSI) զեկույցը, ըստ որի «նման պետական հալածանք չի նկատվել խորհրդային դարաշրջանից ի վեր»:

Խոսվում է, մասնավորապես, «այլախոհության» դեմ համացանցային պայքարում «ֆրանսիական հետախուզության գործուն աջակցության», Ադրբեջանի նախագահ **Ալիեւի** մայիսի 11-ի հայտարարության մասին՝ «Եթե իշխանության գան այլ ուժեր [Փաշինյանից բացի], հայ ժողովուրդը կտուժի», որով վերջինս, այլ կերպ ասած, «ատրճանակը դեմ էր արել ընտրողների քունքին»: Նշվում է նաեւ երկրում իշխանության փոփոխությունից ամբողջ ուժով խուսափել փորձած արտաքին ուժերի դերը, որոնք «վերջին մի քանի շաբաթներին անամոթաբար խառնվել են Հայաստանի նախընտրական գործերին»:

Անշուշտ հասկանալի է ռուսական լրատվամիջոցների խանդոտ վերաբերմունքը մեզանում այժմ տեղի ունեցող գործընթացներին: Դրանով հանդերձ, գուցե արժե նաեւ մեր երբեմն չափազանցված «եվրոոգեւորության» կողքին խորհել նրանց հնչեցրած որոշ մտքերի մասին էլ: «ԻնոՍՄԻ» էլեկտրոնային կայքն, օրինակ, որն արտասահմանյան լրատվամիջոցների հրապարակումները ներկայացնող լավ աղբյուր է, մեր ընտրությունների հաջորդ օրվա մի հրապարակման մեջ հետեւյալ բանաձեւումն է տալիս. «Երբ Արեւմուտքում ողջունում են ժողովրդավարական ընտրությունները հետխորհրդային այս կամ այն երկրում, դա նշանակում է, որ վերջինիս իշխանությունները կարողացել են ապահովել քվեարկության՝ ԵՄ-ին եւ ԱՄՆ-ին հարկավոր արդյունքներ: Այն, որ ընդդիմախոսներին հարյուրներով ձերբակալում են, ընտրական հանձնաժողովների ղեկավարներին ձերբակալում են հարկավոր արդյունք «նկարել» պատրաստ չլինելու համար, իսկ օրենքի խախտումների մասին ընդդիմության բողոքներն անտեսվում են, Արեւմուտքին չի հետաքրքրում: Կարեւորը ոչ թե ինչպեսն է, այլ ինչը»:

Հոդվածագրի պնդմամբ, Հայաստանն այժմ դրանում համոզվում է, բայց չի հանձնվում: Հանրապետությունում արեւմտամետ ուժերը «չկարողացան լիակատար հաղթանակ տանել առողջ բանականության եւ օրենքի նկատմամբ»: Չնայած ԵՄ-ի կողմից 50 միլիոն եվրոյի «շտապ օգնությանը» եւ ֆրանսիական հետախուզական ծառայությունների ուղղակի միջամտությանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական հարթակը» (իրենց բառով) չկարողացավ հաղթահարել 50%-ի շեմը:

Հայաստանի ինտեգրումը Եվրոպային միֆ է, որը կփշրվի՝ բախվելով իրականությանը, գրում է բուլղարական «Տրուդ»-ը: Երկրին հրավիրում են խզելու կապերը իրական, գործող տնտեսական միության՝ Ռուսաստանի հետ՝ հանուն ԵՄ-ին ենթադրական անդամակցության, որի ժամկետը չափվում է սերունդներով, նշում է հոդվածի հեղինակը: Հայաստանի արտաքին առեւտրային շրջանառության 35 տոկոսն, ինչպես ասվում է, բաժին է ընկնում ռուսաստանյան շուկային: Հոդվածագրի արտահայտությամբ, քննություն չի բռնում նաեւ այն թեզը, թե Հայաստանն իր արտահանումները կվերաուղղի ռուսականից եվրոպական շուկա: Բերված տարբեր օրինակներից մեկով, ի մասնավորին, նշանավոր հայկական կոնյակը՝ ըստ մաքսային արժեքի պղնձից հետո երկրորդ խոշորագույն արտահանվող ապրանքը, գնում է Ռուսաստան եւ ԱՊՀ երկրներ՝ 80%-90% ծավալներով, մինչդեռ ԵՄ մասնաբաժինը կազմում է հազիվ 2-5%: Սա ճաշակի եւ սովորության հարց է, այլ ոչ թե քմահաճույքի: Հատկանշական է համարվում, որ երբ ԵՄ-ն հայ արտադրողներին ստիպեց հրաժարվել «կոնյակ» անվանումից, եվրոպական շուկայում դրա վաճառքը նվազեց ավելի քան մեկ քառորդով:

Նկատելով, թե Հայաստանի ապագան վաղուց դադարել է մեր երեքմիլիոնանոց հանրապետության ներքին գործ լինելուց ու դարձել է Մոսկվայի եւ Բրյուսելի միջեւ աշխարհաքաղաքական մեծ մրցակցության հերթական ճակատ, հեղինակը կարծիք է հայտնում, թե երկրի համար ամենախելամիտ տարբերակը չեզոք խաղացող եւ կամուրջ, այլ ոչ թե ճակատային գիծ լինելն է:

Իտալական «L´Antidiplomatico» պարբերականը, նկատի ունենալով Եվրոպայի կողմից մեր երկրին «պարտադրվող», իր բնորոշմամբ՝ չակերտավոր «ժողովրդավարությունը», գրում է, թե Հայաստանը դրանով կբախվի երեք հնարավոր՝ վրացական, ուկրաինական կամ մոլդավական սցենարներից մեկին: Փաշինյանի կուսակցությունը, չհասնելով սահմանադրական մեծամասնության, մի շարք նախաձեռնությունների իրականացման համար, ըստ լրատվամիջոցի, ստիպված կլինի փնտրել շրջանցիկ ճանապարհներ:

Կարոտ մնացինք հանրային համերաշխության

⇨1 Ընդդիմության մեջ էլ է անորոշություն՝ վերցնե՞լ մանդատները, թե՞ չվերցնել: Երկու տարբերակն էլ ընդդիմության համար բազմաթիվ անհայտներ ունի: Չվերցնելու, ՍԴ դիմելու դեպքում՝անհայտ է /կամ՝ ակնհայտ/ արդյունքը, ի վերջո եթե վերջնանպատակը նոր ընտրությունների նշանակումն է, հազիվ թե նոր ընտրություններում ընդդիմությունը կարողանա նույնքան քվե հավաքել, դրանք անշուշտ կպակասեն՝ նախ մոտիվացված ընտրությունն այլեւս միգուցե հնարավոր չի լինի/այն, որ ասում են ընտրակաշառք/, երկրորդ՝ ընդդիմության ներկայացուցիչների հանդեպ հարուցված քրեական հետապնդումները զսպիչ դեր կունենան մոտիվացված ընտրության համար:

Ընդդիմությունը, ընդ որում՝երեք խոշոր միավորների հետ քիչ քվեներ հավաքած ընդդիմամետ ուժերը եւս, խոսում են իշխանության կողմից վարչական ռեսուրսի կիրառման, արձանագրությունների եւ փաստացի տվյալների անհամապատասխանության եւ այլ խախտումների մասին: Իշխանությունը, նրա առանցքային դեմքերն ու հատկապես Նիկոլ Փաշինյանը շարունակում են ընդդիմությանը մեղադրել ընտրակաշառքի տոտալ բաժանման, այլ երկրից ղեկավարվելու եւ ընտրակաշառքով քվեւ ձեւավորելու մեջ:

Անորոշությանը նպաստում են իշխանության սպառնալիքները՝պատժելու, նստեցնելու վերաբերյալ, Ռոբերտ Քոչարյանին եւ այլոց պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելը, արտաքին ազդակները, որոնք նույնպես հավանաբար իրենց գործն անում են:

Հիմա երկրով մտահոգ մարդկանց ավելի շատ անհանգստացնում է այն, որ իշխանություն-ընդդիմություն հետընտրական դիմակայությունն արդեն կարող է վնասներ հասցնել երկրի կայունությանը, տնտեսական անհետաձգելի խնդիրների լուծմանը, անգամ երկրի անվտանգությանը, եթե ընդդիմության գլխավոր օրակարգը մնում է իշխանության տապալումը, իսկ իշխանությանը՝ ընդդիմության ոչնչացումը:

Նորն այն է այս բոլորում, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ղեկավար Սամվել Կարապետյանը հայտարարություն է արել ընդդիմադիր ուժերին համախմբելու, հետընտրական ընդդիմադիր կոալիցիա կազմավորելու մտադրության մասին՝ սխալ համարելով մինչեւ ընտրություններն ընդդիմադիր ուժերի պայմանավորվել չկարողանալը, որն, ի դեպ, մենք առաջվա նման հնարավոր չենք համարում:

Հիմա նոր ընտրություններ անցկացնելու ակնարկներ կարելի է լսել ոչ միայն ընդդիմադիր շրջանակներից, այլեւ, օրինակ, իշխանամերձ Դանիել Իոանիսյանից: Ընդդիմադիրները ընտրությունների արդյունքները մտադիր են վիճարկել Սահմանադրական դատարանում, Նիկոլ Փաշինյանը ներկա խորհրդարանի վերջին ԱԺ-կառավարություն վերջին հարցուպատասխանին կրկին ընդդիմությանն անվանեց այլ երկրի լրտեսներ եւ ընտրակաշառք բաժանողներ, սպառնալով, որ թավիշը վերջացել է եւ սկսվում է եռագլուխ քրեաօլիգարխիկ ընդդիմությանը պատժելու փուլը:

Ընդ որում՝ իշխանությունն արագորեն շրջանառության մեջ է դրել օրենքի նախագծերի փաթեթ, ըստ որի Հայաստանում համապետական ընտրություններին եւ հանրաքվեներին կարող են մասնակցել դրանց նախորդած տարում վեց ամիս Հայաստանում ապրած քաղաքացիները՝ ապահովելով մասնակցային ժողովրդավարություն եւ ընտրողի բավարար կապը պետության հետ: Սա հեռուն գնացող նախաձեռնություն է, որը թույլատրելու է ասիմանադրական հանրաքվե անցկացնել՝ առանց խորհրդարանում սահմանադրական մեծամասնության քվեի:

Փաշինյանը խոսում է երաշխիքներ ստեղծելուց առ այն, որ ընտրակաշառք բաժանողները Հայաստանում չկարողանան քաղաքական ազդեցություն ունենալ, Հայաստանում արմատավորված քրեաօլիգարխիկ համակարգն արմատախիլ անելուց, անվտանգության սպառնալիք ստեղծողներին հակազդելուց: Արդյոք կկրկնվի՞ 1994-ի վիճակը, երբ կուսակցության գործունեություն արգելվեց Հայաստանում:

«Մեմ ու նրանք»-ի սինդրոմը

1996 թվականին ես աշխատում էի այն թերթում, ուր եւ Նիկոլ Փաշինյանը, ու զարմանալի զուգատիպությամբ՝ այդ տարին համապետական ընտրություններում Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ ընդդիմադիր ուժերը ստացել էին ընտրողների 400 հարյուր հազարից ավելի քվեն եւ պնդում էին, թե իշխանությունը կեղծել է ընտրությունների արդյունքները:

Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանությունը հետապնդում էր ընդդիմադիրներին, իսկ ես իմ թերթում գրում էի, որ նա այդ 400 հարյուր հազար քվեատիրոջ նախագահն էլ է, պետք է լուծումներ գտնել, ու չարժե ատելություն բուծել ընդդիմադիրների հանդեպ:

Տեր-Պետրոսյանն ու նրանից հետո բոլոր նախագահներն իրենց իշխանությունը կառուցել են հասարակության բեւեռացման վրա՝ այդպե'ս պահպանելով իշխանությունը, ատելու, բեւեռացման տեխնոլոգիաները գործի դնելով փորձելով իշխանությունը պահել, քանի որ դրա հակառակը երկրի բոլոր քաղաքացիների համար անվտանգային, սոցիալական, արդարադատության եւ այլ երաշխիքների ստեղծումը պիտի լիներ, ու դա նրանք հերթագայաբար ի վիճակի չէին անելու:

Արդյունքը եղել է 1998 թվականի իշխանափոխությունը, 2008 թվականի մարտի 1-ը, 2018 թվականի իշխանափոխությունը՝ հերթական ընտրություններից մի տարի հետո:

Ոչ ոք չի կարող պնդել, թե ինչ կարող հաջորդել այս ընտրություններին, եթե մինչեւ այժմ երեսուն տարուց ավելի փոխադարձ ատելության վրա կառուցված ապրելու տեխնոլոգիան չփոխենք:

Բայց այս իշխանությունը եւ առկա ընդդիմությունը նույնպես արդեն ութ տարի նույն տեխնոլոգիայի մեջ են, եւ հիմա նույնպես հասարակությանը մտադիր են պահել բեւեռացման մեջ, իշխանության դեպքում՝ իշխանության ապահովման միակ միջոց որպես, եւ այդ պատճառով իշխանությունը հետընտրական ամբիոններում նախ խոսում է ոչ թե իր տնտեսական, երկրի զարգացումն ապահովելու մոտակա քայլերից, իշխանության ձեւավորման նոր մոտեցումներ որդեգրելու անհրաժեշտությունից, այլ ընդդիմությանը նստեցնելուց ու պատժելուց, անգամ օրենսդրորեն է նոր զարգացումների է պատրաստվում:

Երեսուն տարուց ավելի ես երազեցի իմ փոքրիկ երկրում հանրային համերաշխության ունենալու մասին, երազեցի, որ հանրությանը երկու մասի չբաժանեն, որ հանրության մի մասը չատի մյուսին, քանի որ եթե մի հայն ատում է մյուսին, է', ինչ տարբերություն՝ նույն հային թուրքն էլ է ատում: Ես միշտ մտածում էի, որ ավելորդ ճոխություն է հայերիս համար միմյանց ատելը, որ պետք է սթափեցնենք մեր քաղաքական ուժերին դրա հետեւանքների վերաբերյալ:

Զարմանալի զուգատիպությամբ, ինչպես 1996 թվականին, հիմա էլ եմ գրում այդ մասին: Երեւում է՝ էլի իզուր:

Մանավանդ հիմա, երբ ԱՄՆ-ն ու Իրանը պատմական համաձայնության հանգեցին, ու այդ իմաստով մեր տարածաշրջանում (ԹՐԻՓՓ-ի առումով էլ) այն արագությամբ զարգացումներ կլինեն, որ Հայաստանը ներքաղաքական խնդիրների վրա կենտրոնանալով՝արտաքին սթափությունը թուլացնելու ոչ մի պահ չի ունենալու: Կազանում զուգահեռ կայացած Պուտին-Հաքան Ֆիդան (Թուրքիայի արտգործնախարար) բանակցությունները վկա, որոնք անշուշտ Հայաստանի վերաբերյալ գաղտնի պայմանավորվածություններ կարող են պարունակել:

Գեորգի Սահակով.
«Ամեն ինչ մեր կամքի մեջ է»

⇨4 «Դեպի ապագա» ամսագիրը, որի խմբագիրն եմ 2008 թվականից եւ որը նախատեսված է լայն ընթերցողական շրջանակի համար, լուսաբանում է համայնքային կյանքն ու տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերը, ինչպես նաեւ անդրադառնում է Ուզբեկստանի միջէթնիկական տարածքում կապերի ամրապնդմանը եւ Հայաստան-Սփյուռք հարաբերություններին: Հարկ է նշել, որ մեր ամսագրի ստեղծման համար մեզ ոգեշնչել է **Շառլ Ազնավուրը**: 2005 թվականին Ուզբեկստանի նախագահը Սամարղանդ էր հրավիրել մեր նշանավոր հայրենակից աշխարհահռչակ շանսոնյեին՝ որպես «Շարք թարոնալարը» («Արեւելքի մեղեդիներ») միջազգային ֆոլկլորային փառատոնի ժյուրիի անդամ:

-Ավելի քան երեսունհինգ տարիների ընթացքում ի՞նչ գլխավոր եզրակացության հանգեցիք՝ որպես համայնքային գործիչ:

-Այն, որ համայնքը կենդանի օրգանիզմ է: Համայնքն ապրում է վերելքներ, խանդավառության ալիքներ ու ցնցումներ, ակտիվության անկումներ, նույնիսկ հիվանդություն եւ թուլություն՝ հաստատելով այս գործընթացի ողջ «ֆիզիոլոգիան» եւ մարդուն, իր ժամանակի մեջ, նրան մենակ թողնելով սեփական մտքերի ու վերաբերմունքների հետ: Ժամանակը ստեղծում է նոր նախընտրություններ՝ ճանապարհի եզրին թողնելով այն, ինչ երեկ ամենակարեւորն էր թվում եւ առաջին պլան բերելով այն, ինչը ժամանակին անհնար կլիներ դասել հավերժական ազգային արժեքների շարքը:

Մոտ տասնհինգ տարի առաջ հանդիպեցի մի տարեց հայ կնոջ: Նա ութսունն անց էր եւ իր տնային գրադարանը՝ հայ հեղինակների գրքերով, բերեց Մշակութային կենտրոն: Ինչո՞ւ էր «աշխարհի ամենաընթերցասեր ազգի» ներկայացուցիչը որոշել հրաժարվել իր գրքերից: Դա առանձին ցավի թեմա է: Հայերեն գիրքը՝ իր հավաքական իմաստով, վերապրել է պատերազմներ, հեղափոխություններ, հալածանքներ ու բռնություններ: Բազմիցս հայտնվել է ճակատագրի եզրագծին, սակայն միշտ մնացել է ազգի սրբազան խորհրդանիշներից մեկը: Բայց ժամանակի ընթացքում կռունկի կանչը դարձել է գրեթե անլսելի, եւ մարդիկ դադարել են կարդալ մեր մեծերի գրքերը: Նոր զանգվածային մշակույթի հեղինակներն այլեւս չեն հասնում «մտքերի տիրակալների» բարձր կարգավիճակին, թեեւ գրողի խոսքը խիստ անհրաժեշտ է:

Մեր զրույցի ընթացքում ես այդ կնոջը հայերեն հարցրի՝ խոսո՞ւմ է հայոց լեզվով: Նա ռուսերեն պատասխանեց, որ՝ ոչ: Պատասխանելուց առաջ երկար լռեց, եւ ես զգացի ծանր հոգեկան հարվածի նման մի բան. հայ տատիկ, որը հայերեն չի խոսում: Հիշեցի, թե ինչպես մոտ քսան տարի առաջ, հետեւելով Սփյուռքում մայրենի լեզվի կորստի ընթացքին, գրել էի «Տատիկին որոնելիս» հոդվածը՝ հարգանքի տուրք մատուցելով ոչ միայն մայրենի լեզվի իսկական ուղեցույցին, այլեւ ավանդական օջախի եւ ամուր ընտանիքի պահապանին: Իսկ հիմա այդ տատիկն այլեւս չկա ընտանիքում, եւ ոչ ոք չի մնացել, որ սովորեցնի՝ ինչպես մնալ հայ: Սա ինքնության յուրատեսակ կամերտոն է, որը միաժամանակ արտացոլում է ազգային կյանքի բազմաթիվ շերտեր: Անհնարին է մեղավորներ փնտրելը, որովհետեւ կամերտոնը մեղավորներ չի մատնանշում, բայց ստիպում է մտածել շատ բաների մասին:

Մի անգամ փարիզաբնակ մաթեմատիկայի պրոֆեսոր եւ պատմաբան **Կլոդ Մութաֆյանը** ձեւակերպեց մեր ժամանակների համար չափազանց ճշգրիտ եւ դժվար վիճարկելի մի սկզբունք. «Հայ լինելն ընտրություն է»: Նա նկատի ուներ սփյուռքի երիտասարդ սերնդին՝ կասկածներով ծանրաբեռնված, ինքնաբացահայտումից խուսափող, մաշված կամ փխրուն ինքնություն ունեցող մարդկանց, որոնք, այնուամենայնիվ, ներսում շարունակում են իրենց հարցնել. «Ո՞վ եմ ես»:

Ոմանք հաճույքով մասնակցում են «Պարենք քոչարի» կարգախոսով ֆլեշմոբներին: Այդպիսի հիշարժան համահայկական միջոցառում տեղի ունեցավ 2015 թվականին: Մյուսները, ավելի համեստ ճաշակ ունենալով, սիրով հաճախում են հայկական էստրադային կամ հաճախ «ռաբիս» կոչվող երաժշտության համերգների: Ինչպես մի գրող է ասել. «Պարի մեջ են բնակվում ժողովրդի բնավորությունն ու հոգին»: Պարը լեզու չի պահանջում, իսկ երգը պարզապես դիպչում է ականջին:

Պետք է ընդունել, որ անցումային հասարակություններում, որտեղ ազգային կարծրատիպերն ու պատկանելության նշանները դառնում են չափազանց ճկուն, մայրենի լեզվի անվերապահ առաջնայնությունը՝ որպես ինքնության գլխավոր գործոնի եւ «արվեստներից կարեւորագույնի», այլեւս լիովին արդյունավետ չի գործում: Բայց, այնուամենայնիվ, պե՛տք է գործի:

«Մեզ տրված չէ գուշակել, թե մեր խոսքն ի՛նչ արձագանք կգտնի»,- գրել է **Ֆյոդոր Տյուտչեւը**: Իսկ եթե դա մեզ տրված չէ, ուրեմն պետք է պարզապես ապրել...

Եվ ամբողջ այս դրամատիկ պատմությունն, ի վերջո, հանգում է մեկ մարդու: Դարերի ու սահող ինքնության փորձությունների միջով անցնելով՝ նա շարունակում է մայրենի լեզուն սովորել որպես օտար լեզու, արդեն յուրացրել է գոյատեւելու արվեստը, բայց դեռ չգիտի, թե ինչպես ապրել, երբ կորցրել է կարեւոր հիմքերը եւ իրեն զգում է ներքուստ չբավարարված ու միայնակ:

Այսօրվա բեկումնային դարաշրջանում՝ իր «արագ սննդով եւ թույլ մարսողությամբ», գենետիկան թույլ օգնական է: Բայց այդ դեպքում ինչպե՞ս «ճանաչել քեզ, հասկանալ քեզ, սիրով գրկել քեզ»...

Առանց պապ ու տատ,
Հայրենական հող,
Մայրենի լեզո՛ւ,
Առանց հայր ու մայր:
Զարմանալի հա՛յ...

Իմ սիրելի **Գեւորգ Էմինի** այս տողերը կարծես ամփոփում են մտքերս: Պարզվում է՝ մնում է հույսը դնել կենդանի միջավայրի վրա՝ իր ողջ ջերմ ու հոգատար բազմազանությամբ՝ ընտանիքի, եկեղեցու, կիրակնօրյա դպրոցի եւ համայնքի վրա՝ իր բովանդակալից մշակութային ծրագրերով: Ի վերջո, մենք ձեւավորվում ենք այն ամենից, ինչ մշտապես մեր աչքի առաջ է: Նաեւ՝ սեփական ջանքերից ու որոշումներից:

Դժվար խնդիր է: Շատ դժվար:

Բայց ամեն ինչ մեր ուժերի, մեր կամքի մեջ է, եթե միայն ցանկություն կա:

Ճապոնական ամենամեծ թերթի հայկական անդրադարձը

Ճապոնիայի ամենամեծ թերթը՝ «Յոմիուրի Շիմբուն»-ը, հունիսի 8-ի համարում անդրադարձել է **Մելինե Մեսրոպյանի** եւ **Արիսա Օտայի «Ճապոնիայում ապրած «սփյուռքը»». Դիանա Աբգարը եւ Հայոց ցեղասպանությունը»** աշխատությանը (Մեսրոպյանի հետ մեր հարցազրույցը տե՛ս «Ազգ», 2026, հունվարի 30): Հոդվածում ներկայացված է ոչ միայն գիրքը, այլեւ Հայոց ցեղասպանության պատմությունը, Ճապոնիայում Հայաստանի դեսպան Դիանա Աբգարի ջանքերը՝ Ճապոնիայից հայ փախստականներին աջակցելու գործում, ինչպես նաեւ այս տարի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը Ճապոնիայում Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչների եւ հայ համայնքի կողմից Յոկոհամայում Աբգարի գերեզմանին կատարված այցը:

「アルメニア人虐殺」日本からの告発者
ダイアナ・A・アブカーの生涯描く
「日本に生きた〈ディアスポラ〉」刊行
難民の支援に奔走
当時の新聞や雑誌で訴え
平和運動家や有力者にも
「無関心や否認 虐殺再発招く」
共著者のメスロビャン・メリネさん「個人でも社会に影響与えられる」
太田阿弥佐さん「心病んでも希望持ち続け」

Ավելի քան մեկ դար անց, երբ Դիանա Աբգարը Ճապոնիայից բարձրացնում էր իր ձայնը հանուն Հայաստանի ու հայերի բարօրության, նրա կյանքն ու գործունեությունը ներկայացվում են Ճապոնական լայն հանրությանը երկրի ամենաազդեցիկ լրատվամիջոցներից մեկի միջոցով: Հետաքրքրական է նաեւ, որ լրագրողը հիշատակում է մեկ դար առաջ՝ 1912 թ.-ին նույն «Յոմիուրի Շիմբուն»-ում զետեղված հայերի կոտորածների մասին Դիանա Աբգարի տված հարցազրույցը: Շատ ճապոնացի ընթերցողների համար սա կարող է լինել Դիանա Աբգարի եւ Հայոց ցեղասպանության պատմության հետ առաջին ծանոթությունը:

Ա. Բ.

Իմաստաբանական բառարան

Չանազանութիւնն ուտելոյ եւ լափելոյ

Մարդը կենդանուց տարբերվում է բանականությամբ, խոսքով եւ ստեղծագործելու ունակությամբ: Սակայն մարդու եւ կենդանու միջեւ կան նաեւ բազմաթիվ ընդհանրություններ, որոնցից գլխավորը ուտելն է:

Ուտելը այն գործընթացն է, որի ընթացքում մարդն ու կենդանին իրենց օրգանիզմի կենսագործունեությունն ապահովելու համար սնունդ են ընդունում. կերակուրը ծամելով՝ կուլ են տալիս:

Սակայն ուտելու հարցում մարդու եւ կենդանու միջեւ կան նաեւ մի շարք տարբերություններ:

Մարդը գրեթե ամեն ինչ կարող է ուտել. սննդից բացի՝ կարող է նաեւ «երդում ուտել», «կաշառք ուտել», իսկ երբեմն էլ իր նմանների «խելքն ուտել»: (Ձիգյար ուտելն, իհարկե, այլ կատեգորիայից է:)

Իսկ կենդանին կաշառք կամ երդում ուտելու համար դեռ երկար ճանապարհ պիտի անցնի: Դրա համար միլիոնավոր տարիների էվոլյուցիա է անհրաժեշտ, որի ընթացքում պետք է տեղի ունենան կլիմայական փոփոխություններ, կենդանին պետք է սովորի երկու ոտքով քայլել, աշխատանքային գործիքներ պատրաստել եւ մեծացնի իր ուղեղի ծավալը: Եվ քանի դեռ այդ դժվարին ճանապարհը չի հաղթահարել, նա ո՛չ կարող է խոսել, ո՛չ ստեղծագործել, ոչ էլ երդում ուտել կամ կաշառակերությամբ զբաղվել:

Ուտելու հարցում մարդկանց եւ կենդանիների միջեւ կա նաեւ մեկ այլ կարեւոր տարբերություն: Մարդիկ, ի տարբերություն կենդանիների, ուտելու եւ խմելու ընթացքում հաճախ մտերմանում են: Հայերեն **ընկեր** բառի ծագումն ու կազմությունը հենց դրա մասին են վկայում: Ըստ մեծանուն լեզվաբան **Հրաչյա Աճառյանի**, *ընկեր* բառը կազմված է ընդ նախդիրից եւ կեր արմատից եւ նշանակում է «միասին ուտող», «հացակից»

Ընդ-կեր բառի ճիշտ պատկերն է գերմաներեն **Genosse** բառը՝ հին գերմաներեն **ginoz** բառից, որ նշանակում է «մեկի հետ ինչ-որ բան վայելել»: Այդ բառը հիմա էլ գործածվում է քաղաքական բառապաշարում, իբրեւ դիմելաձեւ սոցիալ-դեմոկրատական, կոմունիստական, արհմիութենական հանրության կողմից:

Նմանատիպ ծագում ունի նաեւ լատիներեն **companio** բառը, որը բառացիորեն նշանակում էր «հացակից»՝ *com-* («միասին») եւ *panis* («հաց») բաղադրիչներից: Այդ բառից են առաջացել անգլերեն *companion* («ընկեր», «ուղեկից») եւ ֆրանսերեն ***compagnon*** («ընկեր», «գործընկեր») բառերը:

Ընկեր իմաստով գործածվող վրացերեն **megobari** բառը նույնպես կապում են **gobi** («ափսե», «կերակրատաշտ») բառի հետ, այսինքն՝ «նա, ում հետ ափսե ես կիսում»:

Նույն գաղափարն են արտահայտում նաեւ պարսկերեն **ham-kase** («նույն ամանից սնվող») եւ ռուսերեն **однокашник** («նույն շիլայից ուտող») բառերը:

Մարդկանց եւ կենդանիների սնվելու միջեւ կա եւս մեկ կարեւոր տարբերություն. Հայերեն լեզվական ավանդույթում ընդունված է ասել, որ մարդը ուտում եւ ըմպում է, իսկ կենդանին՝ լափում եւ լակում»:

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Թուրքիան օգտագործում է Հայաստանը՝ Կենտրոնական Ասիա թափանցելու համար». Ալ Մայադին

Երեւի ավելորդ չէ երբեմն իմանալը, թե մեզ եւ մեր երկրի ընթացքն ինչպես են ընկալում, գնահատում, նաեւ, մեզ համար կարեւոր արաբական աշխարհում: Այդ աշխարհի մի հեղինակավոր թերթի՝ «Ալ Մայադին»-ի այս հրապարակումը վերնագրված է «Ինչպես է Փաշինյանը դարձել պատճառ այն բանի, որ Հայաստանը հայտնվել է ադրբեջանա-թուրքական գերազդեցության ներքո»: Վերը բերվածը դրա երկրորդ վերնագիրն է:

Մեր խորհրդարանական ընտրություններից առաջ՝ մայիսի 30-ին տպագրված ծավալուն հոդվածի թարգմանությունը ներկայացնում ենք հատվածաբար:



Թուրքիան պատրաստվում է աշխարհաքաղաքական ծավալման նոր փուլի: Այս անգամ այն ձգտում է գերիշխող ազդեցություն հաստատել Կենտրոնական Ասիայում:

Այն բանից հետո, երբ Թուրքիայի շահերը սկսեցին ավելի ու ավելի հակասել բազմաթիվ արաբական պետությունների շահերին, Միացյալ Նահանգները վերանայեց իր տարածաշրջանային ռազմավարությունը: Վաշինգտոնը հրաժարվեց Անկարային արաբական տարածաշրջանում գլխավոր խաղացող դարձնելու գաղափարից՝ նախապատվություն տալով Իսրայելին: Ընդսմին Թուրքիային հնարավորություն տրվեց մեծացնել իր ազդեցությունը Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Նման գիծը համապատասխանում է Միացյալ Նահանգների շահերին, քանի որ թույլ է տալիս թուրքական գործոնն օգտագործել Ռուսաստանի եւ Չինաստանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաեւ զսպելու համար «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը, որի երթուղիներն անցնում են Կենտրոնական Ասիայով:

Հարավային Կովկասում **Նիկոլ Փաշինյանի** դերին նախապատրաստությունը սկսվել էր մի քանի տարի առաջ, երբ Ամերիկան աջակցեց «գունավոր հեղափոխությամբ» նրա իշխանության գալուն: Նպատակն էր Հայաստանը հեռացնել Ռուսաստանից եւ այն Մոսկվայի դաշնակցից վերածել հակառակորդի՝ հարավից լրացուցիչ ճնշում ստեղծելով Ռուսաստանի վրա: Ամերիկյան շրջանակների կողմից պատրաստված Փաշինյանը պատրաստ էր կատարել իրեն հատկացված դերը, եթե անգամ այն հակասում էր Հայաստանի շահերին: Նրա առաջին քայլը Ռուսաստանից՝ բնական դաշնակցից, ինչպես նաեւ մեկ այլ դաշնակից Իրանից որոշակի հեռավորություն ստեղծելն էր: Փոխարենը, Վաշինգտոնի հրահանգով, նա լավ հարաբերություններ հաստատեց Անկարայի հետ: Որպես արդյունք, Հայաստանի դիրքը խոցելի է դարձել իր վաղեմի հակառակորդների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հանդեպ: Երկու երկրներն էլ Հայաստանին նայում են իբրեւ ուղիղ ցամաքային կապեր հաստատելու համար աշխարհագրական խոչընդոտի եւ ձգտում են բացել ճանապարհ Թուրքիայից դեպի Ադրբեջան, այնուհետեւ՝ Կասպից ծովի արեւելյան ափեր ու դեպի Թուրքմենստան: Նման սցենարը գնահատվում է որպես թուրքական ազդեցության ամրապնդում Կենտրոնական Ասիայի երկրներում եւ, հարդյունս դրա, տարածաշրջանում ամերիկյան ազդեցության ընդլայնում: Այդ ամենի նպատակն է խաթարել Ռուսաստանի եւ Իրանի ազգային անվտանգությունը:

Մինչ Փաշինյանը զբաղված էր այս հարցերով, Ադրբեջանը պատրաստվում էր պատերազմի Լեռնային Ղարաբաղի համար, որի նկատմամբ Հայաստանը վերահսկողություն էր հաստատել 1990-ականների սկզբին: 2020 թվականին, Փաշինյանի՝ հայկական բանակը թուլացնող քաղաքականության պատճառով Ադրբեջանը պատերազմ սկսեց Հայաստանի դեմ եւ վերահսկողություն ստանձնեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) զգալի տարածքների նկատմամբ:

Մոսկվայի նկատմամբ Փաշինյանի բացասական դիրքորոշման պատճառով Ադրբեջանը զգաց, որ Հայաստանը հեռանում է իր ամենակարեւոր դաշնակցից՝ ավելի թուլացնելով դիրքերը: Սա հանգեցրեց նրան, որ 2021 թվականի մայիսին Ադրբեջանը նոր պատերազմ սկսեց Հայաստանի դեմ՝ Թուրքիայի բացահայտ աջակցությամբ եւ Միացյալ Նահանգների լուռ համաձայնությամբ: Դրա արդյունքով Ադրբեջանը գրավեց տարածքներ, որոնք Հայաստանը համարում էր իրենը: Փաշինյանը հրաժարվեց Ադրբեջանի գործողություններին ռազմական պատասխանից եւ ընտրեց ԱՄՆ-ի միջնորդությունը: Սա Հայաստանում շատերին ստիպեց նրան կասկածել հայկական տարածքի մի մասը զիջելու դավադրության մեջ: Նրանց կարծիքով դա կարող էր արվել Հայաստանով դեպի Թուրքիա ցամաքային միջանցք ստեղծելու համար, որը կապահովեր ցամաքային կապ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ: Այս մեղադրանքներն ուժեղացան այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը համաձայնագիր ստորագրեց Ադրբեջանի... հետ՝ ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփի** միջնորդությամբ, նրա երկրորդ ժամկետի սկզբում: Փաստաթղթով նախատեսվում է «Զանգեզուրի միջանցքի» (չակերտը մերն է- Գ.Մ.) ստեղծում, որը պետք է անցնի արեւելյան Թուրքիայի տարածքից՝ Հայաստանի միջով մինչեւ Ադրբեջան: Սա կարող է ստեղծել ցամաքային կամուրջ, որը կկապի Թուրքիան եւ Թուրքմենստանը: Նման քայլը Վաշինգտոնին թույլ կտա ընդլայնել իր ազդեցությունը Հարավային Կովկասում եւ առաջանալ դեպի Կենտրոնական Ասիա:

Զուգահեռաբար Փաշինյանը սկսեց Հայաստանի արտաքին քաղաքականությունը վերակողմնորոշել դեպի Արեւմուտքի հետ կապերի ամրապնդում: Երեւանն ակտիվացրեց կապերը Միացյալ Նահանգների եւ Եվրոմիության հետ, ներառյալ մասնակցությունը ԱՄՆ-ի հետ համատեղ զորավարժություններին: Այդ նույն ժամանակ Բաքուն, գործելով Թուրքիայի հետ համակարգված, ակտիվացրեց իր ջանքերը Հայաստանի վրա վերահսկողություն հաստատելու համար: Դրանց նպատակն է ամրապնդել (Թուրքիայի հետ) աշխարհագրական մոտիկությունը՝ հայկական տարածքի հաշվին: Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** նույնիսկ բացահայտորեն հայտարարեց իր մտադրությունների մասին Բաքվի եւ Երեւանի մասնակցությամբ կայացած եվրոպական գագաթնաժողովում: Փաշինյանի լռությունը ընկալվեց որպես համաձայնություն՝ հրաժարվելու Հայաստանի ինքնիշխանությունից եւ նույնիսկ նրա տարածքի մի մասից՝ Արեւմուտքի քաղաքական ու տնտեսական աջակցության դիմաց:

Փաշինյանի կառավարության դեմ աճող ընդդիմությանը իշխանությունները պատասխանում են բռնաճնշումներով; Փաշինյանը հրաժարվել է ժողովրդավարության եւ խոսքի ազատության սկզբունքներից, որոնց մասին խոսելը նրան 2018 թվականին Արեւմուտքի աջակցությամբ բերեց իշխանության: Դրա փոխարեն նա ձգտում է խստացնել դատական համակարգի եւ իրավապահ մարմինների նկատմամբ իր վերահսկողությունը՝ դրանք օգտագործելով, ի թիվս այլ բաների, ընդդիմադիր գործիչներին ձերբակալելու համար: Նա նաեւ փորձել է սահմանափակել մամուլի եւ խոսքի ազատությունը:

Փորձը ցույց է տալիս, որ Հայաստանում իշխանության գալուց ի վեր Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունը էականորեն վնասել է երկրի ազգային անվտանգությանը: Առավել նշանակալի հետեւանքներից մեկը Արցախի կորուստն էր:

Թարգմանեց Գ. ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԳՈՒՅԺ

Վախճանվել է խանդակագործ Մեթյու Սպենդերը

Անգլիական «Times of London» եւ իտալական Florenced-ailynews.com լրատվամիջոցները գրեթե միաժամանակ հաղորդել են այն մասին, որ մայիսի 31-ին 81 տարեկան հասակում անհայտ պատճառներից վախճանվել է անգլիացի հայտնի քանդակագործ, նկարիչ եւ գրող **Մեթյու Սպենդերը**՝ Արշիլ Գորկու դստեր՝ Մարոյի ամուսինը:

Մ. Սպենդերը ծնվել էր համաշխարհային Երկրորդ պատերազմի ավարտին, 1945 թվի մարտի 13-ին, Լոնդոնի արեւմտյան մասում եւ մեծացել գրականության, երաժշտության եւ ընդհանրապես արվեստների եւ մշակույթի առինքնող մթնոլորտում, որտեղ իր վրա մեծ ազդեցություն էին ունեցել Ուիստն Հյու Օդենը, Սեսիլ դեյ Լյուիսը եւ Քրիստոֆեր Այշերվուդը: Հայրը՝ Սըր Սթիվենը իր ժամանակի ճանաչված բանաստեղծներից էր, իսկ մայրը՝ Նաթաշան, շնորհալի դաշնակահարուհի: Քույրը՝ Էլիզաբեթը ամուսնացել էր ավստրալիացի կատակերգու Բարրի Համֆրիզի հետ:

Մեթյուն արդի պատմություն էր ուսումնասիրել Օքսֆորդում: Հետագայում հաճախել էր Լոնդոնի Գեղարվեստի Սլեյդ կրթօջախը, որտեղ բացահայտել էր տեսողական արվեստի գաղտնի շերտերը, որոնք բոլորովին տարբեր էին իրեն ծանոթ գրական մթնոլորտից: Տեսողականը ավելի համառ աշխատանք եւ ճշգրիտ կենտրոնացում էր պահանջում: Նրա այդ բացահայտմանը առավել խորություն է պատճառել Արշիլ Գորկու դստեր՝ Մարոյի հետ ամուսնությունը 1967-ին: Երկու արվեստագետ ընտանիքների միասնությունը նոր դռներ է բացել Մեթյուի առջեւ, որն իր աներհոր կենսագրությունն է ամփոփել «From a High Place» (Բարձր վայրից) խորագրով գրքում՝ հրատարակված 1999-ին:

Հետագայում, 2009 թվին նա նորից է անդրադարձել Գորկուն՝ հրատարակելով «Greats on the Roof» (Այծերը տանիքի վրա) հատորը, որտեղ ամփոփված են ընտանեկան փաստաթղթեր եւ Գորկու անգլերեն ու հայերեն նամակները Վարդուշին, Մուրադին, Կարլենին: Երկու գրքերն էլ բարձր գրախոսականների են արժանացել մասնագետների կողմից: Նրանց հիացրել էին հեղինակի անսովոր անկեղծությունն ու լուրջ պատմաբանի մոտեցումը: 1968-ին Մեթյուն եւ Մարոն տեղափոխվել են Տոսկանա (Իտալիա), որն ավելի քան հինգ տասնամյակ դարձել է նրանց տունն ու արվեստագետ քանդակագործի ներշնչումը: Կիանտիի բլուրներում նա ամբողջովին նվիրվել էր նկարչությանն ու քանդակագործությանը: Նրա ստեղծագործությունները ցուցադրվել են Իտալիայում, Անգլիայում եւ Ամերիկայում:

«**Ազգ**»ի խմբագրությունն ու անձնակազմը խորին ցավակցություն են հայտնում Մեթյուի այրուն՝ Մարոյին եւ դուստրերին՝ Սասկիային եւ Կոզիմային:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով,,առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են,համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի::
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041781, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 18.06.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: